

Լ. ՄԻՆԻՔՆԵՐ-ՎՆԻԿ
(Հայկական ՍՍՀ ԴԱՄ Ի պրակտիկ ամբիոն)

ԳԵՎՈՐԳ ՄԵԼՔԻՍԵՂԵԿՅԱՆ ԽՈՒՐՈՎ

(ՆԱԽԻԹՆԻՒՄ ԽՈՎ. ՆՈՐԻՍԻՍ)

Հայ գրականությունը պատմությունը գաղափարներում և գաղափարներում՝ նախադրությունները շրջանի, առել է՝ XVIII դարի վերջերի և XIX-ի սկզբների գրողների և պատմագիրների շրջանակը սովորաբար սահմանափակվում է երկու-երեք անունների և նրանց գործունեությունը ստեղծագործություն հիշատակությունում, որոնք են՝ Հարություն Արամյանը (1700—1834), Մարտիկ Թադևոսյանը (1803—1858) և Արսեն Բաղրատունի (1790—1800)։

Նախադրությունները հայ գրականության մասին ճիշտ պատկեր կազմելու համար ամենից առաջ անհրաժեշտ է երևան հանել բոլոր նրանց, որոնք այս կամ այն պատճառով և այս կամ այն համոզմամբ կամ լիովին մասնավորապես են մասնակի և, հետևապես, գրականության պատմությունից դուրս մնացել։

Ահա այդպիսի գեղեցիկից մեկը, որը մասնավորապես է մասնակի, Դեմոքրի Եկեղեցիական Պատրիարք է՝ XIX դարի սկզբների պատմագիր և հայ-բենուսեր-բանաստեղծ, միաժամանակ և մանկավարժ և ժողովրդական գործիչը, որը որոշ գրական գիր է խաղացել Հայաստանի՝ Վրաստանի և Ռուսաստանի հետ մերձեցման գործում ղեկավարելով Մարտիկի ստեղծելու նախաձեռնությունը և որն իր համեմատ լուսման մուրհակ է մեր պատմագրության և գեղարվեստական գրականության (պոեզիայի) գանձարանում։

* * *

Հայոց պատմություն և հայ պատմագրություն մասնագետներին լավ ծանոթ պիտի լինի Դեմոքրի կամ Սյուր Պատրիարք, իրեն հեղինակ «1778—1809 թթ. Հայաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրությունը» կոչվող գրքույկի, որը յույս է տեսել Հովսեփ Խաչատուրյանի Դավանանքի և Բանաստեղծության Պատմությանը 1811 թ. և որի հայերեն բնագիրը գեղեցիկ հայտնաբերված չէ։ Ահա այս ճեղքապատկերներն է, որ անցյալի հիշատակում են իրենց գործերում Դյուսա. ք. Աղանյանը (Գեղամի հայոց պատմություն, V, Թիֆլիս 1902, էջ 656) և Արզում. Լ. Հովհաննիսյանը (Восни Эмни, Ереван, 1945, стр. 172—173)։

Նույն Դեմոքրի Պատրիարքի մյուս գործը՝ դա նրա ճեղքաբան կրկնյիկ մանկանց և յարգորակ սիրահար գեղաձարժից ձեռագիր ահարն է՝ 1825 թ. չղարում գրված, որը պահվում է Հայաստանի Մատենադարանում՝ № 487 490-ի ներքո և նշված է Կարենյան ցուցակի մեջ (Յուզակ ձեռագիր մատենից Դրադարանին սրբոյ աթոռոյն էջմիածնի, Թիֆլիս, 1863,

էջ 30): Այս «Երզարան»-ից մի հատված (№ 27)¹ «Ողբ ի վրդովմանն Հայաստանի ողբալով ողբեալ» տպագրվել է «Արարտա» ամսագրի 1868 թ. № 8-ում (էջ 115),¹ որը և նշված է Արսեն վ. Ղազիկյանի բիրյուդրաֆիայում (Հայկական նոր մատենախօսութիւն և հանրագիտարան հայ կեսնորի, I, Վենետիկ, 1909—1912, էջ 1180): Այդ նույն Երզը հետագայում «Արարտա»-ից արտատպվել է և կղվել իբրև «Հավելված Երրորդ» Արզար Գուլամիրյանի հրատարակած Դավիթ բեգի պատմության (Դավիթ-բէգ. Ընտիր պատմութիւն Դավիթ-բէգին և պատերազմաց Հայոցն Պափանու, Վազարշապատ, 1871, էջ 87—88):

Գևորգ Պուրովի այս երկու երկասիրությունը, մեկը տպված ուսուներեն թարգմանությամբ, մյուսը՝ անտիպ, ի նկատի ունի Գյուլա ա. ք. Աղանյանը «Դիվան հայոց պատմության» հրատարակության համապատասխան հատորների առաջաբաններում, ուր անցողակի կերպով խոսվում է Պուրովի և, մասնավորապես, նրա ծագման մասին (հ. III, 1894, էջ խզ. հ. IX, 1902, էջ 656): Սակայն մեկ համար մնում է անորոշ՝ արդյոք Գ. Պուրովի որ երկասիրություններն ի նկատի ունի նույն Աղանյանը, երբ նրան վերադրում է «և այլ քանի մի աշխատություններ; որոնք մնում են տակավին անտիպ» (հ. IX, էջ 656): Գուցե Աղանյանը ի նկատի ունի «1778—1809 թ.թ. Հայաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրության» մեջ տեղ գտած Գ. Պուրովի խոսքերը. «Я с беспокойством оставляю своему потомству слабые, но ревностные свои труды» (стр. 130).

1945 թ. Վրաստանի Պատմական Կենտրոնական Պետական Արխիվը մեր աջակցությամբ ձեռք բերեց մի ձեռագիր դավթար, որը ներկայացնում է իրենից նույն Գ. Պուրովի ստվար աշխատությունը հետևյալ վերնագրով. «Գաւաղանադիրք, որ է Յուդակ ազգարանութեան թագաւորացն Հայոց և նախարարաց և բոլոր պայազատ սպայակտաց և այլոց» (ցուցակադրված է հին վավերագրերի հավաքածուների բաժնի № 705-ի ներքո): Ձեռագիրը այնքան հետաքրքիր հանդիսացավ, որ նրա մասին նույնիսկ նախնական հաղորդագրության ձևով տեղեկություն տրվեց մամուլի էջերում («Заря Востока», 1945 г. 1 февраля, № 22):

Ապա՝ հետաքրքրվելով Գ. Պուրովի անձնավորությամբ՝ մենք անձամբ պրպտուսներ կատարեցինք հիշյալ արխիվի այլևայլ ֆոնդերում, որի հետևանքով հայտնագործվեցին մի շարք արխիվային գործեր նրա և նրա ազգատոհմի մասին:

¹ Հրատարակությանը կցված է այսպիսի ծանոթություն. «Սոյն Պուրով Գեորգ իշխան, որ Սիմէօն կաթողիկոսի եղբորորդին է, «Երզարան» երգեցիկ մանկանց և յորդորակ սիրահար ղեռավարժից» անուամբ մի գրքոյի ունի, որ կը պարունակէ (խզ) բառասուն և չորս հատ ներբող և ողբերգութիւնք և այլն, գորս յօրինել է ի դանազան քաղաքս, որք ըստ բաւականին սրտաշարժ լինելով, մերթ րնդ մերթ Ամսագրոյս միջոցաւ ի լոյս կընծայենք դայնս ի վայս բանասիրաց: Նա և յիշեալ գրքոյի հեղինակին ղեկուցումն ես չեմք զլանալ հաղորդել: Սակայն, չնայած այսպիսի խոստման, մյուս նմուշները սույն Երզարանից «Արարտա»-ի էջերում այլևս չեն տեսել:

² ա. Ֆոնդ 2/8 (Վրաստանի Կառավարչապետի գիվանատան) գործ № 8802/262—«О сочинении грузинского дворянина князя Хубова, высочайшему имени посвященном» (1810).

բ. Ֆոնդ 2/8 (նույն գիվանատան) գործ № 8802/266—«По просьбе грузинского

Այս գործերից մեկում (№ 8802/226) մուծված է ամենայն հայոց Դանիել կաթողիկոսի անունից էջմիածնի 6 արքեպիսկոպոսների, 2 եպիսկոպոսի և 4 աշխարհականի ստորագրությամբ 1808 թ. հունիսի 30-ին արված կոնդակը Խուրովի ազդարանությամբ մասին, որը մենք ստորև ամբողջությամբ հրատարակում ենք:

Այսպիսով, այժմ մեր տրամադրությամբ տակ են՝ մի կողմից Գ. Խուրովի դույզ պատմական գործերը, այն է 1778—1809 թթ. Հայաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրությունը, որը ուսուցիչ թարգմանությամբ է հրատարակված, և «Դավադանագիրքը» բանաստեղծություններով հանդերձ, որը ղեկավար ձեռագիրը վիճակում է գտնվում. մյուս կողմից՝ նրա ձեռագիր «Ներգրան»-ը, որտեղից առայժմ լսել մի երգ (ողբ) է հրատարակված, և վերջապես՝ 6-ի չափ արխիվային գործեր «Վրաստանի Գերագույն Կառավարության» և «Վրաստանի կառավարչապետի ղրվանատան» արխիվային ֆոնդերից, որոնք այժմ Վրաստանի Պատմական կենտրոնական Պետական արխիվում են կենտրոնացած:

* * *

Գևորգ Խուրովի կենսագրությունը կազմելու համար սկզբնաղբյուրներն են, նախ և առաջ, նրա 1778—1809 թթ. Հայաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրությունը, որը պարունակում է ինքնակենսագրական բազմաթիվ տվյալներ, ապա՝ չհաշված նրա մյուս երկերը՝ Վրաստանի Պատմական կենտրոնական Պետական Արխիվում պահվող արխիվային գործերը:

Այս սկզբնաղբյուրները միաբերան վկայում են, որ Գևորգ Խուրովը Սիմեոն կաթողիկոսի եղբոր՝ Մելքիսեդեկի որդին է եղել. մի ժամանակ տիրացություն է արել, ուստի և «տիրացու» է կոչվել, տեղ-տեղ անվանելով իրեն Պոռչյանց կամ Խաղրակյանց, երբեմն նույնիսկ Արշակունի և այլն, քանի որ ինքը իրեն Խաղրակյան-Պոռչյան ազգատոհմից սերված է համարել:

Թե որքան արդյոք ճիշտ է Խուրովների՝ Խաղրակյան—Պոռչյաններից սերումը, այս խնդրին մենք ավելորդ ենք դնում ծանրանալ:

Գյուլտ Աղանյանը 1894 թվին մատնանշում էր վերին աստիճանի հետաքրքիր հանգամանքի վրա՝ «Խուրով» ազգանվան ծագման շուրջը: «Դարու (XIX) սկզբներին Արարատյան դաշտի տիրապետության համար մղած ուսուպարսկական պատերազմից հետո՝ Սիմեոն կաթողիկոսի եղբայր Մելքիսեդեկի որդի Գևորգը, որ իրան Պոռչյանց էր անվանում, ղնում է Պետերբուրգ, որ մտնում է արքունի ծառայության. ուսները նորա ազգա-

дворянина Егора Хубова о вспомоществовании ему в перемещении из Тифлиса в С.-Петербургу семейства его" (1810 г.).

գ. Ֆոնդ 1/2 (Վրաստանի Գերագույն Կառավարության) գործ № 226—«По предложению Грузинского дворянского депутатского собрания о признании в дворянском достоинстве Карпа Хубова» (1819 г.).

դ. Ֆոնդ 1/2 (նույն Կառավարության) գործ № 280—«По представлению исполнительной экспедиции о дворянине Карапете Хубове, отбывающемся от платежа подати по гор. Тифлису» (1820 г.).

ե. Ֆոնդ 2/8 (Վրաստանի Կառավարչապետի ղրվանատան) գործ № 1341—«Об утверждении в дворянском достоинстве армянина Карпа Хубова» (1824 г.).

զ. Ֆոնդ 2/8 (նույն ղրվանատան) գործ № 2089—«По прошению армянского князя российского дворянина Георгия Мельхиседекова Хубова об отводе ему высочайше пожалованной земли» (1829 г.).

նունը թարգմանում են ոուսերեն և Պոռոջանը դառնում է Դյժ-ՕՅ (Գուր-ով, պոռ՝ չուրթն = ոուսերեն թարգմանվում է Դյժ¹), որ հետզհետե աղավաղվելով՝ դառնում է Ղուբով, ապա Խուր = ու, ըստ հայկական վերջավորութայն՝ Խուր-սասցա (Դիվան հայոց պատմութայն, III, 1894, էջ 104)։ Ապա Աղանյանն ավելացնում էր. «Մեր ձեռքին է այժմ Խուրյանց ազգի մի անդամ Աղաֆոնի պետական աստիճան ստանալու (համար) մի տպած հրովարտակ և Հովհաննես Ը. Կարբեցի կաթողիկոսի 1832 թ. հունիսի 10-ին սաղնիւ աղայ Կարապետ Ղուբովին» դրած մի կոնդակ, որոնց մեջ երկուսն էլ հիւրավոր անվանվում են «Դուբով» և Ղուպով (նույն տեղ)։ Մի այլ տեղ Աղանյանը նույն 1894 թվին նշում էր նաև, որ «ուրիշ հավանական ենթադրություններ կան, թե Խուրեանց աղնվական ծագումը մեկ զարու հնություն անդամ չունի և ուրեմն չէր կարող գոյություն ունենալ նույնիսկ Սիմեոն կաթողիկոսի կենդանության ժամանակ» (Դիվան, III, 104)։

Մենք, զժրախտարար, ոչ մի հնարավորություն չունենք ստուգելու, թե ինչ բովանդակություն ունեն չովհաննես Կարբեցու 1832 թ. հունիսի 10-ին տված կոնդակը «սաղնիւ աղայ Կարապետ Ղուբովին», սակայն ի վիճակի ենք հրապարակ հանելու ավելի վաղ ժամանակվա, այն է՝ Դանիել կաթողիկոսի անունից «Արարատյան աթոռոյն էջմիածնի... սուրբ ժողովի» 1808 թ. հունիսի 30-ին տրված կոնդակը՝ «Գեորգ և Կարապետ Մելքիսեթյան Խուպովյանց» անունով։

Իացի տոհմաբանական-ծննդաբանական տվյալներից, 1808 թ. կոնդակը հետաքրքիր է նաև այն մասում, ուր՝ հակառակ Գյուտ Աղանյանի հաղորդած ստուգաբանության «Խուբով» ազգանվան, որն իրր թե ոուսերեն «Դյժ-ՕՅ»-ից է առաջացել իրր «Պոռոջան»-ի բառացի թարգմանություն՝ տալիս է ռեալ մեկնաբանությունն այդ ազգանվան՝ «ի ժամանակս Շահապասայ մինն ի նոցանէ, որում անունն էր Խուտարաշխ, գնացեալ առ Ապպաս՝ երեքսու նմա հաճոյական կերպիւ, մինչ ինքն Շահապասայ ի ներկայութեան յառաջկայիցն իւրոց զովաբանելով խօսեցաւ վասն նորա «Խուր Մէլիք», որ թարգմանի լավ Մելիք, և յանձնեալ ի նա զպաշտօն մեկրութեան՝ դարձոյց վերստին յերևան, ուր մեռաւ ի նմին պաշտօնի»։

* * *

Գեորգ Խուբովը ծնված պիտի լինի 1762 թվին, Երևանում, հայրենական տանը, քանի որ իր հորեղբայր՝ Սիմեոն կաթողիկոսի մահվան պահին (1780 թ. հունիսի 28-ին) նա 18 տարեկան է եղել. «В Бозе почивающий Симеон, патриарх всея Армении, будучи дядею моим, воспитывал меня от седми до осмнадцати лет моего возраста в св. Эчмиадзине, при наставлениях хороших учителей, которые ежедневно внушали мне то правило, что начало премудрости есть страх Гос-

¹ Աղանյանը սխալվում է. պիտի լինի Գյժ. Ն. Մ.-Ք.։

² 1808 թ. կոնդակում ներկայացրած «Խուբով» ազգանվան ստուգաբանությանը, ը միջի այլոց, ձայնակցում է «իուր» արմատի ստուգաբանությունը, որ տալիս է Ն. Աճառյանն իր «Հայերէն արմատական բառարան»-ում (Ն. II, էջ 550). «Խուր, ար. <արս> ԽԱՅ. «լավ, զեղեցիկ» բառից. երևի զործածական էր իրրև անձնանուն, որից և Խուբեանց ազգանունը»։

поден“, — այսպես է սկսում իր «1778—1808 թ.թ. Հայաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրությունը» Գ. Սուրովը (էջ 1)։ Հետևապես Գ. Սուրովը Սիմեոն կաթողիկոսի հսկողության տակ է եղել էջմիածնում 7 տարեկան հասակից, այսինքն 1769 թվից սկսած մինչև 1780 թ., և հենց 1780 թ. ստացած պիտի լինի տիրացուի կամ դպրի աստիճանը։

Սիմեոն կաթողիկոսի մահից հետո Գ. Սուրովը որոշ մասնակցություն է ունենում Երևանի, մասամբ և Նախիջևանի խաների, ինչպես և Երևանի հայ հասարակության բանակցություններում նախ Վրաստանի և ապա Ռուսաստանի պետական գործիչների հետ Հայաստանը պարսկական լծից ազատելու նպատակով։

Սկզբում, ինչպես Գ. Սուրովը գրում է, ինքը հաղորդակցության դժվարության պատճառով ի վիճակի չէր գործոն դեր խաղալ այդ բանակցություններում. «В то время, как Потемкин (Павел Сергеевич), прибывший в Георгиевскую крепость, требовал к себе людей, более сведущих во всем, как к духовному, так и светскому состоянию относящихся, общество наше удостоило меня оной чести. Но я не мог исполнить своего поручения по той причине, что опасно было предпринять назначенный путь, ибо производившие тогда войны между персидскими владетелями содействовали проезду чрезвычайно затруднительным» (էջ 5—6)։ Ապա՝ նշելով, որ Պոտյոմկինի անունից Հովսեփ ա. ե. Արղությանը պահանջում էր մարզիկ, մինչդեռ այլևայլ հանգամանքները խոչընդոտ էին հանդիսանում նրա՝ Սուրովի ճանապարհորդությանը, նա գրում է. «Мне нельзя было оставить престарелых родителей своих, пока еще в свежей памяти содержали кончину родственника своего Патриарха. Я как бы предузнал близкую смерть их; ибо она в том же году постигла их. Вместо меня послан был в Россию Стефан Геламский» (էջ 6)։

Ապա Գ. Սուրովը գաղտնի խորհրդատու և միջնորդ է հանդիսանում Երևանի Մահմադ-խանի բանակցություններին կոմս Զուբովի հետ, որը 1796 թ. Ազրբեջանում գտնվող ոսկապ գործի հրամանատարն էր. «Муаммет хан Эриванский, преемник отца своего Юсейн-Али-Хана, призвав меня к себе через тысячника Гавриила, удостоил меня своей доверенности. Он через меня имел тайную переписку с Графом и обещание хранить к нему верность и искренность в поступках своих, ответ Графа сохраняем был нами в такой же тайне». Իսկ որ Գ. Սուրովը երբեմն խանի խորհրդականն է եղել, երևում է հետևյալ խոսքերից. «Хан... из уважения моего родства с покойным патриархом часто требовал от меня советов» (էջ 7)։

Նույն Մահմադ-խանի և իր գործունեության մասին Գ. Սուրովը գրում է. «Он решился искать помощи у армянского архиепископа Иосифа, находившегося в Грузии, куда я должен был отправиться и употребить все усилия к склонению Ираклия и генерала Корсакова к этому»; «Хан... отправил меня в сопровождении двадцати пяти человек в Грузию, откуда через шесть суток надлежало мне привезти ему решительное известие»; «мы благополучно приехали в Грузию. Но прожив в Тифлисе более шести суток, я возвратился в

Эривань под видом купца для избежания всякого со стороны персов подозрения“ (էջ 9):

Հիշատակելով Երևանի և Նախիջևանի խանների բանտարկվելը պարսից շահի կողմից, Գ. Խուրովը նշում է, որ նրանք «тайно требовали совета от меня и тысячника Гавриила» (էջ 22):

Ռուսաց զորքի կողմից՝ զեն. Պ. Յիցիանովի առաջնորդությամբ՝ Երևանի պաշարման նախորդակին, 1803 թվին, Գ. Խուրովը թշվառ վիճակի մեջ է գտնվում, որի մասին գրում է Թիֆլիսում գտնվող Հովհաննես Լալսկյան Գարրեցուն (նետապալում կաթողիկոս), խնդրելով տեղեկացնել ռուսաց զորքի շարժման մասին. «Я в скором после сего времени писал к Иоаннесу Епископу о бедственном своем состоянии и просил его скорее уведомить нас о движении Российских войск, идущих на защиту Эривани» (էջ 27): Միաժամանակ նա ընդգծում է, թե ինչպես հայերն ահ ու երկյուղ էին կրում պարսիկներից (էջ 40):

Նույն Գ. Խուրովի մասնակցությամբ գրություններ են ուղարկվել Գրիգոր վարդապետի ձեռքով՝ Հովհաննես Լալսկյանին և զեն. Պ. Յիցիանովին: Վերջինին հասցեագրված նամակներում խաները նշում էին, թե ինչպես էին նրանք տարրիկ հազարավաթից և «իշխան Եղոր Խուրովից» լսել «Ռուսաց հզոր պետության» մասին, երբ նրանք զենու 1797 թ. Վրաստան էին ուղարկված:

Գ. Խուրովը մանրամասն պատմում է այն մասնակցության մասին, որ հայերն ունեցել են Երևանի բերդի 1803 թ. ամռան պաշարման զործում, երբ ստրատեգիական նշանակություն ունեցող միջոցառումների նրկատմամբ իրենց բարի խորհուրդներն են հասցրել ռուսաց զորքի հրամանատարին: Ահա և Գ. Խուրովի խոսքերն այս մասին. «[Мы] писали к нему (Иоаннесу Епископу) и о том, чтобы Россияне, ежели начнут осаждать [Эриванскую] крепость, действовали более с возвышенности на восточной стороне от оной находящейся, потому что оное место было укреплено слабее прочих,—что известно было одним только престарелым людям,—так что ни одно ядро не могло пролететь мимо. Между прочим уведомляли и о том, что Россияне могут получать припасы из Эчмиадзина, в коем находились большие хлебные магазины, впрочем несколько разоренные персами» (էջ 53): Ինքը Գ. Խուրովը աջակցում էր ռուսաց զորքի պարենավորման գործին (էջ 60—61): Միաժամանակ նշվում է վրաց զերբ այս արշավանքի միջոցին (էջ 64): Եվ այս բոլորը պարսիկների մեջ վարթեցրեց անվստահություն զԵրևանի հայերը, որոնց նրանք զավաճաններ և ռուսաց լրտեսներ էին անվանում. «Принимали истинным доказательством нашей измены то, что мы, союзники России, снабжали их (русских) хлебом, и почитали нас их шпионами в своей крепости; почему согласились, оставив на время внешних неприятелей, истреблять нас (армян), как внутренних своих врагов» (էջ 67—68): Եվ հայերը, ըստ Գ. Խուրովի վկայության, պատրաստ էին մեռնելու (էջ 69): «Мы... принуждены были сносить от персов язвительные ругательства. Я более всех терпел оные. Они мстили мне разорением садов и другого недвижимого моего имения» (էջ 91—92): «17 сентября... были порождены зрелищем,

когда увидели дома, сады и другие здания, прежде благолепные, а теперь в кучи развалин и пустыни обращенные» (էջ 97): Նույնը Գ. Խուրովը գրում է հ իր՝ 1829 թ. մարտի 16-ի խնդրագրում. «Я более всех по преданности моей к Российской державе претерпел от персов язвительные ругательства и самое разорение садов и другого недвижимого моего достояния, которое, оставив в руках персиян, удалился наперед я один в благословенную Россию»: Ուրիշների թըվում պարսիկներն ավերում են նաև Գ. Խուրովի «զույքն ու այգիները Երևանում» (էջ 91—92), ինչպես և նրա տունը Երևանում (էջ 95). «День и ночь старались изготовить для себя какое-нибудь убежище, дабы спасти жизнь и свое семейство» (էջ 98),—ասում է Գ. Խուրովը:

Դրությունն ավելի ևս բարդանում է, երբ Երևանի խանը արգելում է հայերին հաղորդակցություն ունենալ Վրաստանի հետ (էջ 98): Միաժամանակ նույն խանը խորհուրդ էր տալիս Գ. Խուրովին «բնակություն հաստատել Թիֆլիսում և այնտեղ աշխատել նրան հանձնած գործի համար» (էջ 102—103): Սակայն, բացահայտ կերպով Երևանից Թիֆլիս հեռանալը վտանգավոր էր: Եվ Գ. Խուրովն այլևայլ միջոցների է դիմում իր ընտանիքն աներանց տուն՝ Բայազետ տեղափոխելու և այնուհետև անձամբ 2 տղաներով Վրաստան անցնելու համար, որպեսզի գրանով պարսից վրեժխրհրությունից զերծ մնա: «Дорога была опасна. Притом надобно было скрыть от других свой отъезд; почему я приказал купить хлопчатой бумаги, дабы тем показать, что еду за ханским делом... Я избегал близкого своего бедствия, но пролил слезы об отечестве, которое оставлял в таком жалком состоянии, тем более, что тогда было зимнее время. По причине опасности на дорогах отпустил свою супругу с детьми в дом ее родителя, жившего в сорока верстах от Баязида; а сам с двумя сынами отправился в Грузию, где находился Карапет, брат мой, с того времени, как город наш (Эривань) целые три года колебался от возмущений, по случаю не признания над собою власти шаха» (էջ 103—104): «В сие время я отправил своего брата, с семейством его, в Тифлис и ожидал сам удобного к тому же случая» (էջ 104):

Ահա այս մոմենտից է, որ սկսվում է Գ. Խուրովի թափառական կյանքը, որի մեջոցին նա զրազվում է զրականություն, վերջինիս մեջ գտնելով միակ «մխիթարությունն ու սփոփանքը» (утешение и отраду), ինչպես ինքը խոստովանում է «1778—1809 թ.թ. Հայաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրության» մեջ:

1803 թվի նոյեմբերին հասնելով Թիֆլիս, Գ. Խուրովն աշխատում է գոնե հեռվից պիտանի լինել իր հայրենիքին և հայրենակիցներին, որոնք պարսից լծի տակ էին մտնում:

Սակայն Գ. Խուրովը Վրաստանում երկար չի մնում, ըստ երևույթին իր՝ գործունեության համար այստեղ ասպարեզ չգտնելու պատճառով:

«1778—1809 թ.թ. Հայաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրության» մեջ Գ. Խուրովը գրում է. «Ефрем, архиепископ в России обитавших армян, неоднократно просил меня к себе для лучшего препровождения времени. При отъезде моем к нему Эриванское ар-

мянское сословие поручило мне за собственноручными их подписаниями прозьбы к Государю Императору о том, дабы он соизволил принять высочайшие свое участие в горестной их участи и повелел отвести армянам такое место, на котором бы упражняясь земледелием, они могли содержать себя и свое семейство“ (էջ 126—127):

Թիֆլիսում եղած պահին Գ. Խուրովը հորինում է «Վասն սրախողխող առժանն ՚Դանձակու» եղերերգությունը, գրված Դանձակի 1804 թ. առժան առթիվ, որ մտել է նրա «Երգարան»-ի մեջ № 11-ի ներքո:

Ուղիղ 2 տարի Թիֆլիս ֆաուլց հետո Գ. Խուրովն ուղևորվում է դեպի «որհնյալ Բուսաստանը» (благословенная Россия), ինչպես ինքն է նշում 1829 թ. մարտի 16-ին գրած իր մի խնդրագրում: Նա նախ անցնում է Հյուսիսային Կովկաս, ուր կանգ է առնում Մոզդոկում:

Այս առթիվ Գ. Խուրովը գրում է. «1805 года ноября 28 дня с своим сыном я выехал из Грузии, 23 декабря был уже в Моздоке, где имел удовольствие видеть Ефрема Архиепископа. Я вручил ему письмо от армянского общества, которым просил о пастырском его предстательстве за странствующий свой народ. О том же просил и Мину и Якима Лазаревых“ (էջ 127): Նաև «Оставив свое отечество, я долго не имел вернейших оттуда известий, из которых одно было такое, которое выслушать нельзя было без содрагания“ (էջ 128):

Ապա Դևորգ Խուրովը նշում է, թե ինչպես Պ. Յիդիանովից հետո Վրաստանի կառավարչապետ նշանակվեց կոմս Գուգոփիչը, որին Մոսկվա գալուն պես Սինաս կադրերը մատուցել էր այն խնդրագիրը, որ ինքը (Խուրովն) էր բերել Մոզդոկ: Ի պատասխան սրան, Գուգոփիչը «охотно обещался по своем прибытии в Грузии облегчить участь странствующего нашего (армянского) народа“ (էջ 129): Ընդ սմին Գ. Խուրովը շարունակում է. «В 1807 году я вторично чрез письмо просил о том же Мину Лазаревича, который во время своего пребывания в Москве хотел было приступить к делу, но смерть его лишила нас сей надежды. Как истинный и общий всем доброжелатель он поручил мне смотра над Московским Армянским училищем“ (էջ 129):

«1778—1809 թ.թ. Հայաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրությունից», ինչպես կարծիքային գործերից, դժբախտաբար, չի երևում, ստանձնել էր արդյոք Գ. Խուրովը Մոսկվայի հայկական դպրոցի տեսչությունը և, եթե ստանձնել էր, որքան էր տեղի նրա պաշտոնավարությունը այդ դպրոցում:

Անկախ Գ. Խուրովից, հենց նույն պահին Ղզլարում բնակություն է հաստատում Սիմեոն Էլիասյան Խուրյանը, որը Դանիել կաթողիկոսի 1808 թ. հունիսի 30-ի կոնդակում հիշվում է իրրե Ժ Ղզլար բնակեալ Երեանցի Էլիզան Սիմեոն Խուրեանցի:

1809 թվին Ռուսահայոց թեմի առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսն բնադրվում է ամենայն հայոց կաթողիկոս, որին Գ. Խուրովը նվիրում է մի շարք ստանափորներ, որոնք մտել են նրա կազմած «Երգարան»-ի մեջ № 14, 15, 16 և 18-ի ներքո: Սրանցից առաջինը (№ 14) հորինված է Եփրեմի Մոզդոկ մտնելու առթիվ՝ 1810 թ. հունվարին:

1810 թվին Գ. Խուրովը Պետերբուրգում է:

Պետերբուրգում եղած պահին՝ Գ. Խուրովը 1810 թվի օգոստոսի 16-ին գիտում է ներքին գործոց մինիստր Կոզոզովիին այսպիսի մի խնդրագրով, որը կարևոր տեղեկություններ է պարունակում նրա կենսագրության համար։

„Ваше Превосходительство Милостивый Государь!

„Вступив в подданство России и желая в оную переселить и мое семейство из Тифлиса, слышу, что не дают свободного пропуска никому, если не будет по закону плотимы государственные подати; это причиняет мне беспокойство, чтоб семейство мое в проезде своем из Тифлиса в Россию не встретило каких либо препятствий.

„Сего ради всепокорнейше прошу Ваше Превосходительство оказать мне милость, дав известие тамошнему Главнокомандующему, дабы сделано было семейству моему свободный пропуск из Тифлиса в Россию, пока еще глубокая зима не настала“.

Պետերբուրգում եղած պահին՝ 1810 թվին՝ Գ. Խուրովը կազմում է իր «1778—1809 թ.թ. Հայաստանի արժանաշիշատակ անցքերի նկարագրությունը», որը ուսերենի է վերածում տեղիս Հովսեփ սարկավազ Հովհաննիսյանը։ Աշխատությունը, որը Գ. Խուրովի աղբյուրի գրական գործն էր, նվիրվում է Աղեքսանդր Վ կայսեր, որի աթիվ ղեկուցադիր է ներկայացվում կայսեր 1810 թ. օգոստոսի 13-ին և, ի հետևումն այս ղեկուցադրի, ստացվում է հրաման Գ. Խուրովի գիրքն ուղարկել ի քննություն Պետերբուրգի ցենզուրական կոմիտեին՝ նույն թվի օգոստոսի 17-ի № 895 գրություն (Ֆոնդ 2/8 գործ № 8802 262)։

Ցենզուրական կոմիտեի նախագահ կոմս Ալեքսեյ Կիրիլլովիչ Ռազումովսկին 1810 թ. սեպտեմբերի 16-ի № 1168 ներքին գործոց մինիստր Օսիպ Պետրովիչ Կոզոզովիին ուղղված գրությամբ տալիս է մանրամասն բնութագիր Գ. Խուրովի աշխատության նախնական խմբագրության մասին։

Կատարելով պահանջվող ուղղումները, Խուրովը իր աշխատությունը նորից ներկայացնում է կոմիտեին, նույն 1810 թ. նոյեմբերի 9-ին։

Մինչ Գ. Խուրովի գիրքը ցենզուրական կոմիտեի քննության առարկա էր դարձել ու նրա հրատարակության հարցը դրական լուծումն կատարելու, նա՝ Գ. Խուրովը, 1810 թ. նոյեմբերի 30-ին ներքին գործոց մինիստր Օ. Պ. Կոզոզովիին մատուցած խնդրագրով հարց է բարձրացնում իբեն որոշ հոդամաս հատկացնելու համար տեխնիկական կուլտուրաների ծավալման նպատակով։

Ահա և այդ ուղարկության արժանի ղոկումենտը, որը պարունակում է կարևոր տեղեկություններ և մի շարք այլ խնդիրների շուրջը (տես Ֆոնդ 2/8 գործ № 8802 262)։

„Милостивый Государь Осип Петрович!

„На основании добродетельного [внимания] Вашего Превосходительства, которым я с давних времен имею щастье пользоваться, осмеливаюсь просить вторичтельно Ваше Превосходительство об от-

1 Վրաստանի կենտրոնական Գաղմական Գետական Արխիվի (Ֆոնդ 2/8 գործ № 8802/266, (չ 12 ա)։

веденимъ мнѣ земли поданной отмене пролбу графу Румянину сего 1810-го года февраля мѣсе. единственно для заведеній иностранныхъ разныхъ рукоделаній показать свое художество, оное же дело прерываждено назадъ тому 17 мѣсе Вашему превосходительству, и по сие время не могу получить никакое решение. Покорнейше прошу повелѣть вторительно куда следуетъ; сочинение же мною историческую книгу поднесено Вашему Превосходительству и обо немъ не могу имѣть никакое сведеніе, претерпевъ Арменій побуждаетъ мнѣ представить Вашему Превосходительству прошедшее о усердствіи своей судьбы российскому двору, приложивъ при семъ рекомендательные письма патриархомъ Ефремомъ Армянскимъ Графу Румянцову, Пейде-ру, Князю Куракину, а также къ (несколько словъ не ясно) въ при-бывшій на поселеніе {в} Тифлизъ 1500 домовъ отъ араратскаго края прошеніе съ переводомъ на российский языкъ Его Императорскому Ве-личеству, и все сие представляю Вашему Превосходительству, пое-лику есть ли князь Цицнановъ былъ живъ, то секретная переписка моя съ нимъ, показательное усердіе, если бы быть доведено до сведенія Государя княземъ Цицнановымъ, нынѣ же оставъ безъ всякаго утешенія и не имевъ надежды къ исполненію прозбы моей кроме какъ знаме-нитой особы Вашей.“.

1810 թ. փետրվարին, — 1811 թ. սեպտեմբերին Գ. Սուրովը ստանում է թույլտվություն տպագրելու իր «1778—1809 թ.թ. Հայաստանի արժանա-հիշատակ անցքերի նկարագրությունը» փրնագիրը կրող գրքուշիլը՝

1811 թ. հունվարի 3-ի մի գրություն մեջ նշված է, որ թույլտվոր կայսրը «повелеть соизволил Князю Хубову дозволить напечатать сие сочинение на свой счет, с тем однакож, чтобы при напечатании все листы доставляемы были в Цензурный Комитет для поправления по-грешностей в чистоте слога“:

1811 թ. մայիսին Գ. Սուրովը գիտում է Ալեքսանդր I կայսեր հե-տնյալ ուղերձով.

„Всеавгустейший, Монарх!

„Желая описать достопамятные произшествия Арменіи со вре-мени патриаршества Симеона, моего дяди, я имѣлъ одно то намере-ніе, чтобы, напомнивъ своимъ единоземцамъ бедствія и раззоренія, ка-кіе нанесли персы нашему отечеству, показать настоящее ихъ состо-яніе, въ которомъ они нынѣ подъ благословеннаго Державою Вашего Императорскаго Величества наслаждаются счастьемъ и тишиною“.

Ի պատասխան այս ուղերձի, Գ. Սուրովին «ամենապարմաճարար» շնորհվում է տպամանկյա մատանի 400 ո. արժույթյամբ, որը և հան-ձրնվում է նրան ներքին գործերի մինիստր Օ. Գ. Կուզովսկիի նույն 1811 թ. հունիսի 25-ի № 993 գրությամբ հանդերձ (տե՛ս ֆոնդ 2/8 գործ № 8502 262):¹

¹ Սրա կապակցությամբ միանգամայն հասկանալի է, թե Գ. Սուրովը ինչու է նվի-րում հատուկ ուսանավոր «նորին կայսերական Սեծություն», այսինքն, Ալեքսանդր I Պափ-լովիչին, որ մտած է նրա «Սրգարան»-ի մեջ № 12-ի ներքո:

Ի դեպ, կարևոր է նշել և այն, որ Գ. Սուրովի գիրքը լույս տեսնելու 1811 թ. ամս-

1814 թ. մտերքը Գ. Խուրովը ավարտում է իր երկրորդ զրական աշխատությունը, այսպես կոչված «Կավագանագիրք»-ը, որի հաղվագյաւ աճեռողիւր-րնաղիւրը Վրաստանի Պատմական Կենտրոնական Պետական Արխիւի հին վավերագրերի բաժնի № 705-ի ներքո է մուծված և որի մասին մանրամասն կխոսենք առաքել:

Գ. Խուրովի Պետերբուրգում կեցած ժամանակաշրջանին է վերաբերում նրա միջոցառումներն աղնվական ծագման մեջ հաստատվելու ուղղությամբ, որը զրական իմաստով լուծվում է 1816 թ. նոյեմբերի 30-ին կայացած Երարձրագոյն հրամանով:

Այս աշխարհի խնդիր է հարուցում Թիֆլիսում բնակություն հաստատած նրա կրտսեր եղբայր Կարապետ (Կարպ) Խուրովը, որի մասին զրագրություն է սկսում Վրաստանի Գերագոյն Կառավարությունը 1819 թ. մարտի 11-ին և որը նույնպես իր զրական լուծումն է ստանում 1824 թ. հուլիսի 1-ին:

1814 թ. մտերքը Գ. Խուրովը գտնվում է Հյուսիսային Կովկասում, սակայն այս անգամ ոչ թե Սոգդոկում, այլ Ղզլարում, ուր պաշտոնավարում է իրեն հայոց զավառական զարոցի ուսուցիչ: Եվ հենց այս պահին է նա ձեռնարկում իր երրորդ զրական գործը՝ «Երգարան»-ը, որը կազմում է, հավանական է, զարոցական պահանջներին բավարարելու նպատակով և որն ավարտում է 1825 թվին:

1821 թվին Աստրախանում Ազարյան զարոցի փոխարեն բացվում է հոգևոր վարժարան, որի տեսուչ է նշանակվում Սերովրե Պատկանյանը, իսկ Ս. Պատկանյանից հետո, հավանական է, 1827 թվին, նույն պաշտոնը հանձնվում է Ղզլարից տեղափոխված Գ. Խուրովին:

Այսպիսով Գ. Խուրովը վերջնականապես հաստատվում է Աստրախանում:

Գ. Խուրովը 1829 թ. մարտի 16-ին Աստրախանից Թիֆլիս է ուղարկում մի խնդրագիր Վրաստանի կառավարչապետ Ի. Ֆ. Պառկելիչի անունով, որը բազմաթիվ ինքնակենսագրական տեղեկություններ է պարունակում Գ. Խուրովի մասին, ինչպես և նրա գործունեության մի քանի հարակից պարագաների շուրջը՝ քաղաքական ասպարեզում, որից երևում է, որ նա ուսումնական օրինատացիային հետևելու պատճառով զրկանքներ է կրել ու հալածվել պարսիկների կողմից:

1829 թվից հետո Գ. Խուրովի անունը ոչ մի տեղ այլևս չի հիշատակվում: Ոչ մի բան չի լսվում նաև նրա կալվածքի մասին:

Հետևապես, պիտի ենթադրել, որ Գ. Խուրովը 1829 թ. մտերքը վաճառելի է մոտավորապես 67 տարեկան հասակում: Հավանական է թագված լինի Աստրախանում:

Համեմատյալ փոքր պարզ է, որ Գեորգ Մեկերսեդեկյան Խուրովը, միևնույն կաթողիկոսի երրորդին, ծնված է 1762 թ., որն այնքան տարված

տերրին: այն է 1815 թ., մի ուրիշ հայ մտավորական, վրացախոս, Ռաֆայել (Ռաֆէլէ) Գանիրեղովը, որն իրեն «Վրաստանի աղնվական» է կոչում, հրատարակում է իր «Նորապարհորդութուն փոքի Ննգկաստան» գիրքը, որ նվիրված է նույն Ալեքսանդր Լեյբնից Գիրքը գրված լինելով վրացերեն՝ լույս է տեսնում առաջին թարգմանությամբ Ննգկաստան վերնագրով. «Путешествие в Индию грузинского дворянина Рафаила Даниеловича. Перевод с грузинского» (Москва 1815).

Ի իր իշխանական ծագումն ապացուցելու լղեփիրսով և այնքան ճիգ ու ջանք էր գործ գնում, որպեսզի Ռուսաստանի ազնվական ճանաչվի (որ նրան հաջողվեց) և կալվածատեր զառնա Ղզլարի շրջակայքում. գուցե և բարի ցանկությամբ բարձրորակ գյուղատնտեսական կուլտուրաներ այնտեղ ծավալելու նպատակով (թեև ապարդյուն). իրականում եղել է 1797 և 1803 թ.թ. Պարսկաստանի դեմ գործող ռուսաց զորքին աջակցող և առհասարակ ռուսական օրինենացիային հետևող գործիչ, ուստի և՛ հալածվելով պարսիկներից, ստիպված է եղել թողնել իր հայրենի Երևանը և հայաստանը և գաղթել նախ Թիֆլիս (1803), ապա Հյուսիսային Կովկաս (1805)՝ Մոզդոկ, այստեղից Մոսկվա, Պետերբուրգ, նորից Հյուսիսային Կովկաս (1814)՝ Ղզլար և, վերջապես, Աստրախան, ուր և 1829 թ. մոտերքում մեռնում է։ Ուսուցչութուն է արել գուցե չատ կարճ ժամանակ Մոսկվայում, ապա մոտ 15 տարի Ղզլարում և Աստրախանում, ուր նույնիսկ եղել է Ս. Պատկանյանից հետո, հոգևոր վարժարանի տեսուչ։ Միջանկյալ դրադվել է նաև գրականությամբ, իրրե պատմագիր և բանաստեղծ-գրող։

ԽՈՒԲՈՎԸ ԻՅՐԵՎ ՊԱՏՄԱԳԻՐ

Գ. Խուրովը թողել է 2 պատմագրական գործ. ա. «1778—1809 թ.թ. հայաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրությունը», և բ. «Գավազանաղիրքը», որոնցից երկրորդը պարունակում է նաև մի շարք բանաստեղծություններ գերագանյապես պատմական-հայրենասիրական բովանդակությամբ։

Առաջին գործը, ղժբախտաբար, մեզ հասել է ոչ թե բնագրում, այլ ռուսերեն թարգմանությամբ ձեռագրից, որ կատարել է Պետերբուրգի հայոց եկեղեցու սպասավոր՝ Հովսեփ սարկավազ Հովհաննիսյանը և հրատարակվել է հետևյալ ընդարձակ վերնագրով. «Описание достопамятных происшествий в Армении, случившихся в последние тридцать лет, т. е. от патриаршества Симеонова (1778 г.) до 1809 года. Сочинение князя Егора Хубова. С армянского перевел Армянския церкви архидиакон Иосиф Иоаннесов. Печатано на основании Высочайшего повеления в Санктпетербурге 1811 года».

Իրերը, ինչպես վերևում նշվեց, ձոնված է Ալեքսանդր I կայսեր, որին հեղինակը դիմում է իր աստջարանով, ուր ընդգծված է աշխատության նպատակը և մեթոդը։

Բերում ենք այն բառացի.

„Всеавгустейший Монарх!

„Цель, с какою составил я сие описание грабительств и разорений, в позднеейшее время персами нанесенный Эривани, не есть какое-либо тщеславие, но одна любовь к отечеству. Она-то поселила во мне желание, чрез сие напомнить сынам Армении то время, в которое они каждую минуту были подвержены опасности насильственно потерять жизнь свою.

„Всемилоостивейший Государь!

„Из уроженцев стран Араратских удостоюсь соделаться щастливым подданным Российской Державы, я дерзаю повергнуть пред

подножием священного престола Вашего Императорского Величества сие изображение бедствий, претерпенных моими единомышленниками, кои купно со мною ныне наслаждаются спокойствием под благословенным скипетром Вашим“.

1778—1809 թթ. Հայաստանի արժանահիշատակ անցքերը գրի առնելու նպատակի և մեկոդի մասին հեղինակը խոսում է տեղ-տեղ նաև իր «նկարագրության» մեջ, օրինակ. —

„Я прилагал всевозможное старание обстоятельно узнать сим произшествия от людей, подробно и верно оные ведавших, несколько не полагаясь на собственные мои об оных сведения, хотя сами, потерпев великие бедствия, были очевидцем очень многого. Мое желание стремит[ь]ся к тому, чтобы читатели сего краткого описания нашли в нем ясно и верно представленные произшествия и не раскаивались в напрасно потерянном времени. Дабы обстоятельно и истинно описать при мне и без меня случившиеся произшествия я делал все усилия, чтобы собрать известия посредством писем разных особ, кик Российских, так и Персидских. По своему любопытству я при каждом благоприятном случае прибавлял по несколько сведений к общей оных сумме“ (էջ 94—95):

Վերջապես.

„В... странствиях я находил единственное утешение и отраду в описывании их для своих собственных потомков. Я всегда желал повествовать бедствия своего отечества и страдания христиан от жестоких варваров. Желание мое исполнено, и я с безпокойством оставляю своему потомству слабые, но ревностные свои труды“ (էջ 129—130):

„Те, кои будут сомневаться в справедливости описанных произшествий, переменят свои мысли, когда будут иметь случай прочитатъ все письма князя Цицианова, епископа Иоаннеся и прочих особ, кои все в целости у меня находятся“ (էջ 130):

Գանի որ Գ. Խուրովի այս անդրանիկ երկը նրատարակված է, բավականանում ենք այսքանով նրա բնութագիրը տալով և անցնում ենք երկրորդ երկին՝ «Դավազանագրքին», որը նրա գլուխ գործոցը պիտի համարվի:

Գ. Խուրովի երկրորդ գործը, ինչպես վերևում նշեցինք, Վրաստանի Պատմական Կենտրոնական Պետական Արխիվի կողմից ձեռք բերած և ին վավերագրերի բաժնի հավաքածուի № 705 ներքո համարակալված ձեռագիր-դավթարն է, որի տիտղոսաթերթը զարդացվում է այսպես. —

«Դավազանագիրք; որ է Յուդակ աղգարանութեան թագաւորացն Հայոց և Նախարարաց և բոլոր պայազատ սպայպետաց և այլոց, սկսեալ ի Յարէթայ, որգւոյ Նոյի, երկրորդ հօրն աշխարհի, ի 2263 թուականէ աշխարհի մինչև ի 1184 թիւ Փրկչին, որ պարունակէ զժամանակս իբրև 4750 ամաց, որոց ամենայնից յորմէ ազդէ և յորոյ շառաւիղէ յառաջանալ և յորպիսի կառավարութեան և իշխանութեան գոլ և յորում ամի և յոր ժամանակի և ցորճան տեիլն իշխանութեան: Եւ ես զԽնչ և զորպիսի գործել և որով հաւատով կենցաղավարիլ իւրաքանչիւրոցն համառօտակի ար-

ձանադուցեալ: Նաև սրբան կայսերք Հայկազանց և սրբան նախարարութիւնք լեալ են և յսրոյ սերեալ և անուանեալն, և զկարգ կայսերաց և թագաւորաց և ալոյցն ուրոյն ուրոյն հատկացուցեալ և եօթնկարգեան ըստ կալուած կարգի աստիճանացն՝ զաստկարգեալ և ալ ախօրինակ քաջայաղթ ախոյեանց հայկազանց և ալազանց զանուանս ըստ մասին և զարարս սմանց և քաջարեաց՝ կարճառօտութեամբք յիշմամբ շարակարգեալ ցուցանէ:

«Աշխատասիրութեամբ հարազատարին հայկազան, հայրենասէր, հաւատարիմ և փոյթեռանդուն սրտացաւ ջանադիր մեղուաների Գեորգ Մելքիսեդեկեան խուրով խաղրակեանց յօգնաշխատ իշխանի, եղբորորդոյ տեառն Սիմէօնի մեծի ամենայն Հայոց զերընտիր և բազմերախտ կաթողիկոսի Երեանցւոյ ի զրօսանա ազգասիրաց:

«Ի հայրապետութեանս (և բարձրագոյն հրամանաւ իսկ) լուսանկար աթոռոյն էջմիածնի տեառն Եփրեմայ արժանընտիր և կայսերապետակ սրբազնասուրբ կաթողիկոսի ամենայն հայոց և հոգեծնի մեծին Սիմէօնիս»:

«Աշխատութեան զրութեան տեղն ու ժամանակը, զժրախտարար, նշված է: Եփրեմ կաթողիկոսի հիշատակությունը կարող է մեզ տալ միայն terminus ante guem non-ը՝ 1809 թիվը (Եփրեմի կաթողիկոսանալու թվականը): Միայն ըստ տեքստի մեջ, 56-ը էջում, 1814 թ. ներքո հեղինակը մոծել է այսպիսի հիշատակարան. «Գեորգ Մելքիսեդեկեան խուրով խաղրակեան Արշակունի, որ սիրատոշոր ջանիւ, բայց սգապատեալ սրտիւ, լալազին աշօք, թախծեալ անձամբ և ցավալի մտամբք գրեաց զայս յիշատակութիւնս զիւցադնացեալ տիրապետողացն Հայկազանց, որք իշխեն և ոչ ևս երեին, ոչ թէ տեղիք միայն, այլ մինչ յիշատակք ևս այնպիսեաց վեհանձանց ևն», — որն ուղղակի մատնանշում է «Դավազանագրքի» վերջնական ձևակերպման ժամանակը՝ 1814 թիվը:

«Դավազանագիրքը», որը ժամանակագրական պատմութեան բնույթ է կրում, բաղկանիւն ինքնուրույն փորձ է Հայաստանի ժամանակագրութեան: Թեև փաստորեն այն Մ. Զամչյանի եռհատոր «Հայոց պատմութեան» ազդեցութեանն է կրում՝ ավանդական կոնցեպցիայով, սակայն զազափարականորեն տարբերվում է նրանից. քանի որ զեպի միութեան միարանութեան տեղ վարդապետ-պատմարանը տրամադրված է բացասականորեն, «Սիքայէլ Զամչեան ախտարմատ ժողովօղ և քամահօղ պատմագրաց» անվանելով նրան:

Այս «Դավազանագիրքը» տարբերվում է նաև «Դիրք պատմութեանց, որ կոչի Դաւազանագիրք» համանուն բազմաթիւ փորձերից (հմմ. Ս. Կանայեանց. Յուդակ հայերէն ձեռագրաց Թիֆլիսի Ներսիսեան հոգևոր դպրանոցի, Թիֆլիս 1893, էջ 48—52. Յ. Թովմեան. Յուդակ ձեռագրաց Խաչիկ վարդապետի Դադեան, Վաղարշապատ, 1898, էջ 52—53 և այլն):

Դ. խուրովի «Դավազանագիրքը» պարունակում է 90 թերթ. բաղկացած է հետևյալ մասերից.

էջ 1 ա—3 բ առաջարան:

էջ 4 ա—6 բ մաքուր է թողած:

էջ 7 ա—53 ա Հայաստանի ժամանակագրութեանը սկսած «Նոյից» մինչև Կիլիկիայի թագավորութեան անկումը:

էջ 53 ա—56 ր Նույնը Կիլիկիայի անկումից հետո, մեկիքների պատմությունը, Դավիթ-բեկի էպոպեան և այլն:

էջ 57 ա—58 ր Ուրացողների և դավաճանների ցուցակը:

էջ 59 ա—60 ր Ծանոթություններ:

էջ 61 ա—65 ր Հայ և օտար գրողների հիշատակությունը:

էջ 65 ր—66 ր Սակս կայսերական կոչմանը:

էջ 67 ա—90 ր Ցանկ:

Ցանկը կազմված է «Դավազանագրքի» օգտագործումը դուրացնելու նպատակով: Այս առթիվ հեղինակը գրում է. «Առ ի դիւրաւ գտանելոյ զանուանս իւրաքանչիւրոցն այրուբենական ցանկով նշանակեցաք զամենայն կարգս և յատջիկայդ» (էջ 67 ր):

Օրինակ՝

Դ. Պուրովի «Դավազանագիրքը» հիմնականում, իհարկե, վերամշակումն է Մ. Չամչյանի «Պատմություն Հայոց»-ին կցված աղյուսակների, օրինակ՝ «Դասակարգությունք իշխանութեանց (նահապետք, թագաւորք և իշխանապետք Հայոց)»-ի, էջ 105—108: Բայց նա կանխում է Մ. Saint-Martin-ի տվածին՝ «Mémoires historiques et géographiques sur l'Arménie», t. I, Paris 1818, pp. 407—436, որն օգտագործել է Ա. Պուզարշյանը՝ «Обозрение Армении в географическом, историческом и литературном отношении», Спб. 1859, էջ 491—533 (Хронологический перечень лиц, управлявших судьбою армянского народа и армянской церкви):

«Դավազանագրքի» մեջ մտած ժամանակագրությունը տարբեր գրական և գիտական արժեք ունեցող նյութ է ներկայացնում իրենից: Մի մասը, մանավանդ սկզբնական 7 ա—53 ա էջերը, ոչ այլ ինչ են, բայց եթե Մ. Չամչյանի հետեողությամբ կազմված ցուցակն է: Մյուսը, սրը 53 ա էջից է սկսվում, համեմատաբար ավելի ինքնուրույն է: Այս վերջինից, անտարակույս, պատմաբանի ուշադրության արժանի են. ա. Հայ իշխանները և նրանց ժամանակագրությունը Կիլիկիայի թագավորության անկումից հետո, ներառյալ Ղարաբաղի մեկիքների և, մասնավորապես, Դավիթ-բեկին վերաբերյալ հոգվածները շուրջ 1373—1814 թթ. (էջ 53 ա—56 ր). բ. Հայոց պատմության մեջ իրրե ուրացողներ և դավաճաններ հոչակված անձանց ժամանակագրական ցանկը՝ 59 անուն, ՝ որոնց վերջում հիշված են 2 մեկիքներ՝ Ֆոտանգյուլ և Կարապետ (էջ 57 ա—58 ր) և գ. հայ և օտար մատենագիրների ժամանակագրական ցանկը, ուր հիշատակված է 266 անուն, որոնց թվում 73 հայի, երբեմն կոպիտ սխալներով, օրինակ Թոմա Արծրունին նշված է 500 թ. ներքո, Ուխտանեսը՝ 580 թ. (էջ 61 ա—66 ր):

Բացի դրանից, ձեռագրի այս ու այն էջերում աչքի են ընկնում պատմական-հայրենասիրական բնույթի ոտանավորներ, որոնցից մեկը նույնիսկ ձեռագրի ամբողջ տարածությունն ունի գրաված՝ մի-մի տուն յուրաքանչյուր թերթի գլխին, սրը մենք՝ արտագրելով՝ ի մի ենք հյուսել, միացրել: Այս ոտանավորները, գրեթե բոլորը, չնչին բացառությամբ, մենք հրապարակ ենք հանում մեր այս աշխատության հաջորդ (III) գլխում, որ նվիրված է Դ. Պուրովի բնութագրմանը իրրե բանաստեղծի:

Ստորև մենք հրատարակում ենք պատմագրական բնույթ կրող վերո-

հիշյալ հատվածներից մի քանիսը, որոնք հիմնված են զետեւ անհայտ սկզբնաղբյուրների վրա:

Հատվածներում տեղ-տեղ ժամանակադրությունը խախտված է և պատմական դեպքերն ու անձինք ետ և առաջ են քաշված, որ մենք նույնությամբ պահպանել ենք:

**Ա. ՀԱՅ ԻՇԽԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԿԻԼԻԿԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ**

- էջ 53 ա 1373. Իվանէ իշխան Վաղանդնոյ Որոտնեցի, հայր Կախիկ Յովհաննէս սուրբ վարդապետի:
1374. Շահան իշխան Գոռիկոյ, փեսայ Լեոնի վերջնոյ և զերեկից:
1386. Վասակ մեծ նախարար քաջ, Արշակունի Քաղաքեանց, տէր Գեղամայ:
1387. Մարտիրոս քաջ, իշխան և բարեպաշտ տանուտէր Գողբայ:
1395. Յովհաննէս քաջ, զինուոր գերեթափ Աղու գեղջ:
1420. Վաղին իշխան Արծկէոյ ողորմած աստուածասէր և նահատակ:
1421. Սմբատ Իվանեան Բուռթիւայ Ուռպելեանց Սիւնեաց:
- Բուռթէլ, եղբայր Սմբատայ, տէր Որոտնայ:
- Տարսայիճ, իշխան երեւելի, տէր Եղեղեայ:
- Սուրաթմիդ, մեծ իշխան, տէր Մակուայ:
- Աղիգան աղատորդի յԱրարատայ Աղցից գեղջէ:
1430. Գորդի մէլիք, տէր Աղու գեղջ, եղբայր Մեծորեցւոյն:
- Մուրատշահ, իշխան, տէր Արծկէոյ:
- 53 բ Յովհաննէս իշխանաւոր Արծկէոյ:
1434. Մկրտիչ, տանուտէր Գերիշատ գեղջ, իշխան և նահատակ:
1437. Պելղինէ, որդի Սմբատայ, մեծ իշխան Ուռպելեանց:
1440. Պոօ Վասակեան Արշակունի Քաղաքեանց, տէր Գեղամայ և Գառնւոյ:
1492. Վասակ քաջ, կրսիւր որդի Պոօի, Արշակունի, տէր Գեղամայ և Գառնւոյ:
- Ամիր-Հասան Պոօեան, եղբայր Վասակայ քաջի Քաղաքեանց, Արշակունի:
- Պապուկ Պոօեան Արշակունի, եղբայր Վասակայ քաջի:
1529. Գէորգ Վասակեան Քաղաքեանց Արշակունի քաջ:
1528. Թորոս, որդի Սուրբանշահի, Հոռմկլայեցի նահատակ:
- 1434 Յովհաննէս բարեպաշտ իշխան Ասպիտակ գեղջ, նահատակ:
- Ողջա կամ Կեոկճան խօջա աղնուական իշխան Սիրաստաթի նահատակ:
1568. Տարոն լոյս Կաֆայեցի իշխան և նահատակ, վասն որի զրեաց ողբ Վրթանէս վարդապետ:
1586. Քուրաբաշի, որ և խուր Մէլիք, Քաղաքեանց Արշակունի Գէորգեան:
1434. Արիստակէս իշխան, եղբայր Թովմայի Մեծորեցւոյ, նահատակ: ||
- 54 ա 1586. Սարուխան-բէկ իշխան յՈսկանապատ գեղջ:
- Նաղար իշխան, եղբայր Սարուխան-բէկի:
- Ջալալ բէկ, իշխան Քաշեան:
- Սաջում մէլիք Գիգակայ:
- Փաշիկ մէլիք Քօչիցեցի:
- Բարդէն մէլիք Բրետիսեցի:
- Հայկաղն մէլիք Քանաճախայ:
1604. Քաշիկ իշխան Ջուղայեցի Ա. սկտեղր ոսկի ընծայեաց Շահարասայ:
- Նափուղ իշխան Ջուղայեցի, նոյնպէս ոսկի ընծայեաց:
- Նաղար մեծ իշխան Ջուղայեցի առաջագէմ, նոյնպէս ոսկի ընծայեաց:
- Աղամալ Ջուղայեցի, մէլիք Երևան քաղաքի, շինող եկեղեցւոյ սուրբ Ծօհաննէս Մկրտչի:

1606. Շահնազար պայազատ իշխան Մազրայու, հիւրընկալ Շահ[ա]րասայ.
Յովսէփ մէլիք, խնամատար հայոց Ասպահանայ:
Մուրատ մէլիք, խնամատար հայոց, բնկեր Յովսէփայ:
1611. Սաֆար խօջայ, իշխան Ջուղայեցի:
Պետրոս Մէլիքեան խալարեանց խօջայ Սաֆարեանց:
Պողոս պարոն Սերաստացի, տանօղ նշխարաց սրբոյն Հովսիսեանց:
1614. Անձրե խօջայ Յղենցի իշխանաւոր մեծ:
Հայկազն մէլիք Ջուղայեցի, տէր Գողթան:
Սուլթանում խօջայ, երեւի իշխան Ջուղայեցի:
Միրովէլի, իշխան Ջուղայեցի:
1620. Նարիջան քաջ, իշխան Փահրնյ, զինեալ վասն հաւատոյ նահատակի:
1621. Գրիգոր իշխան քաջ աստուածապաշտ, վասն հաւատոյ նահատակի:
1634. Աւետիք մեծ իշխան Բաղիշեցի հանդերձապետ:
Գրիգոր Խուրով Խաղբակեանց Արշակունի յոյժ բարեպաշտ:
1648. Ախիջան բարեպաշտ իշխան Վանեցի, շինօղ մեծ եկեղեցւոյ սրբոյն Սահայ:
- Զիրաք իշխան Գէրաքենց, նորոգող եկեղեցւոյ սրբոյն Պողոսի ի Վան:
1651. Մարխաս Թօմայեան խանենց Վանեցի բարեպաշտ իշխան:
1668. Գրիգոր բարեպաշտ Խօջենց իշխան և տէր Երևանու:
- 54 p 1772. Ստեփաննոս, ժողովագլուխ իշխան Գանձակի, հրաւիրող Դաւթի:
Մարգար իշխան Բաղտասարին Լղուորեանց Ջուղայեցի:
Նաչիկ իշխան Ջուղայեցի Բ:
Սարհատ իշխան խալարեանց Ջուղայեցի:
Մանուկ իշխան Սամուրի Ջուղայեցի:
Յովհաննէս մեծ իշխան Ուտէացւոց և Գուգարաց:
1722. Դաւիթ քէկ Մարգարան Սիւնեաց. խնդրանօք ժողովրդեանն քրիստոնէից
և հնարիւք Ստեփաննոսի խոհական իշխանին կարգեցաւ ի 1722 թուոյ
ի Շահնաւուղայ իշխանէն վրաց զօրավար և կուսակալ կամ մարդպան
և փրկիչ եղելոցն հայոց ի կողմանս Սիւնեաց, Արցրխայ և Փայտակա-
րանի և այլոց, որք տառապէին յԱղուանից ի լեկաց և յայլոց կեղեք-
չաց: Իսկ զօրացեալն Գրիստոսիւ քաջադոյն Դաւիթ յառաջնումն նուազի
40 և եթ անձամբ հարեալ վանեաց գլխովին զայլադղիսն ի Սիսական
զաւառէ, յերկրորդումն օգնութեամբ Մխիթարայ անպարտելի սպարա-
պետի իւրոյ հնար շորեքհարիւրօք զվեշասան հազարան, կատարելով
միանգամայն զաւար և զապուր նրցա: Դարձեալ օգնութեամբ նոյնոյ
Մխիթարայ և տէր Աւետիք քաջաղէն քահանայի՝ պարտեալ խորտակեաց
և զօրութիւնս շորեքտասան հազար զօրաց նախարարին Նախիջևանու:
Դարձեալ նոյն շորեքհարիւրօք միայն պատեալ զփնառիկ ամրոցն Ջու-
առին և զշորս հազարսն կոտորեալ կողոպտեցին:
1726. Դարձեալ ի զօրաժողով գումարիլ այլադգեաց եօթանասուն հազարաց և
ի պատելն թնդանօթօք և հրացանօք զամրոցն Դաւթի զՀալիձոր. ելեալ
Մխիթարայ և Աւետիքի երեք հարիւրօք և եթ կոտորեալ զերկոտասան
հազար խուժանսն սպառազինելոց և ցան և ցիր ցրուեալ զանպատկառ
զրոհսն՝ առին և զ148 զօրակս և զամենայն աղիս նոցա և զարձան ի
Հալիձոր: Դարձեալ ժողովեալ այլադգեացն 22 հազար վառելոց ի Մեղրի
քաղաք և առաքեաց Դաւիթ զտէր Աւետիք և զՄխիթար զապիրատս
իւր 66. միայն կորովելօք և հնարիւք և ահարկութեամբ և անպատմելի
քաջութեամբ զորս կոտորեցին և զորս գետակուր կորուսին և ինքեանք
աւարաց և զարդուց և զինուց նոցա տիրեցին: Դարձեալ ժողովեալ ան-
թիւ բաղմութիւնք այլադգեաց միանգամայն և առնել ցանկային զԴաւթ-
եանսն, յորում միջոցի տազնապ և խռովութիւն մեծ էր ի նոսա, միշտ
հաշտեցուցանել Դաւիթ ոչ կարաց, հնարիւք կորուսանել զթշնամիսն
զօրեաց, զանխուլ թողեալ (ասէ) զշուս մատակ ձիոց ի րանակ այլադ-

դեպքն, որոց և մակիսն էր ի վարացն կատարութեամբ կործանեցան վրանք և սատակեցան բաղումբ. և շփոթութեամբ բանակ նոցա լցաւ և յայնմ սոսկալի պէս Դաւիթն կորովի ութն միայն արամբ յարձակեցաւ ի վերայ այլադղեաց. վասն որոյ և խրախուսեալ զօրացն աճապարեցին և նորա գնեալ, և անհարին տաղնապաւ շուարեալ և շփոթեալ թշնամեացն բանակովին ի փախուստ և ի կորուստ դարձան և դամենայն դաւար նոցա ժողովեալ Դաւիթեանցն զՏեառնէ դոհացան: Զայս ամենայն զայսոսիկ զանպատմելի մեծագործութիւնսն Դաւիթ լուեալ Շահթամազայ՝ կարդեաց զնա իշխան մեծ ի վերայ նախարարաց իւրոց եղբորց յաշխարհէն Սիւնեաց և Արցախայ և Փայտակարանի ցիւր զեառ. և հրաման ետ հատանել զրամս յանուն իւր և զայլ անգրելի քաջութիւնս ցուցեալ Դաւիթ ի 6 ամա իշխանութեան իւրոյ հանդեաւ ի 1728 թուոյ:

1728. «Աւդ օրինակ կայ մեզ արի Սիւնեաց իբխանս այս քաջ Դաւիթ,
Ու երկաթեամբ միաբաճեալ զօրժեաց զայնս զօրս զօրժեաց Դաւիթ,
Զի քանզի զՅովսէփ անցոյց Միսրաւսն և Աւետիքն լացն զԱրեւմեք,
Ուստի թէ աւդ ևս միաբանիմք անձն իւր անձնէ մօր քաջ Դաւիթ»:
1722. Միսրիթար սպարապետ քաջ անպարտելի նիզակակից Դաւիթ, Սիւնեաց
իշխանի:
Աւետիք քահանայ քաջ սպարապետ և նիզակակից Դաւիթ, Սիւնեաց
իշխանի:

Թորոս իշխան զաւառին Զաքիդուրայ Արցախու:

Փարսաղան զօրավար իշխան Հայիձորոյ:

1724. Պապ Սրապիտնեան վերակացու Կենաւուրդայ:

Նուպար իշխան Զաքիդուրայ:

Գորգի զօրավար Դաւիթ-բէկի:

50

Ստեփաննոս Վրթանիսեան Շահումեան իշխան Կենաւուրդայ:

Պայինդուր զօրաղլուխ Նուպարայ իշխան Զաքիդուրայ:

1725. Պալի զօրավար, որդի Փարսաղանայ Հայիձորոյ:

1727. Մուսի մէլիք քաղաքապետ Աղուլեաց:

1740. Թօփալ մէլիք և քալանթար Երեւանու, հայր Մանուշարի:

1742. Խարում իշխան Աղամալեանց, վերակացու Նախիճեանու:

1741. Յարութիւն քալանթար, այսինքն ազգապետ Երեւանու:

Յակոբջան մէլիք Աղամալեան, իշխան Երեւանու:

Խաչիւրար մէլիք Քանաքիսցի, իշխան Երեւանու:

Աւետիք քալանթար, իշխան Երեւանու:

Մատթէոս մէլիք Աղամալեանց, իշխան Երեւանու:

Յօհաննէս մէլիք Աղամալեանց, իշխան Երեւանու:

Փանոս խօջայ, մեծ իշխան Երեւանցի, շինող եկեղեցւոյ Անանիայի
առաքելոյն:

Մանուշար քալանթար Գեղամեցի Թօփալեան, իշխան Երեւանու:

Եարութիւն խօջայ Փլաւեան, իշխան Երեւանցի:

Աստուածատուր Մեսրոբեան հաղարապետ Գեղամեցի, իշխան Երեւանու:

1748. Սարգիսջան, մէլիք Գեղամեցի, իշխան Երեւանու:

1749. Աղէքսանդր Աղամալեանց, իշխան Շօթօթեցի:

Յովհաննէս Խնդամիւրեան քաջ իշխան Շահկերտցի:

Միսրիթար իշխան Շահկերտցի:

Ղազար զօրավար իշխան Շահկերտցի:

Բարաղամ մէլիք, իշխան Աստապատայ:

Պալում մէլիք, իշխան Աստապատայ:

Վարդապար զօրաղլուխ Շահկերտցի:

Սատաթ մէլիք Սիսիանու:

Գրիգոր քաջ հսկայ Շահկերտցի:

Ղազար մէլիք Սիսիանու: ||

- 56 ա 1750. Յովակիմ խօջայ, մեծ իշխան Երեանցի, խօջիանց։
 1755. Գրիգոր իշխան խոթածանեան Ջաբրիելանց Ջուղայիցի։
 Յովհաննէս Եղիազարեան մեծահամբաւ իշխան Ջուղայիցի, շինօղ եկեղեցեաց հայոց Մոսկովու և Պետրբուրգու։
 Եսայի բաժ, իշխան Աղուլիցի։
 1766. Ազամ մէլիք, իշխան Արցախայ, մէլիք Հախիջանով։
 Յովսէփ մէլիք, իշխան Արցախայ։
 Եսայի մելիք, իշխան Արցախայ, մելիք Եկանյան։
 Ալլահդուլի (այսինքն Աստուծոյ ծառայ) Սուլթան իշխան Արցախայ և տէր Իերզին։
 Շահնազար մէլիք, իշխան Արցախայ։
 Միրզախան մէլիք, իշխան Արցախայ, մէլիք Ալլահվէրդեան։
 1770. Աւետիք մէլիք Բէհրուդեան, իշխան Տփիսխայ։
 Գորջասպ Թումանով, իշխան Թիֆլիզու։
 Մինաս մէլիք Սատաթէկեան, իշխան Երեանցի։
 Շահամիր Սուլթանուսեան Ջուղայիցի երեւի իշխան։
 1814. Գեորգ Մելքիսեդեկեան խուրով Խաղրակեան Արշակունի, որ սիրատու չոր ջանիւ, բայց սգապատեալ սրբիւ, լալագիմ աշօք, բախժեալ անձամբ, և ցաւալի մտամբք գրեաց զայս յիշատակադրութիւնս զիւցազնացեալ տիրապետողացն Հայկազանց, որք իշխին և ոչ ևս երեւին, ոչ թէ ահադիք միայն, այլ մինչ իշատակք ևս այնպիսեաց վեհանձանց և այլն։
 Վալով. սգալով և արտասուք, քան մելանաւ գրեալ Գեորգ.
 Գրեա, ողբա, մի՛ զարեաւիւր, զի սգալի է դաւա այս Գեորգ
 Յայմեան արեաց և յարաւանցն զո՛րն և կամ զի՛նչ գտանեա, Գեորգ,
 Ջի իմեանմ ցմբք եվ փառքն շտապ, քան զգոյս անցիմ, Գեորգ։
 Եւ բաց յայսցանէ դաւանեցեալք են առաջակայ նախատանք յԱզատ տանց՝ կամ ի բարեպաշտ սերնդոց հայոց և այլ բազում երեւիլ յատկացեալ իշխանք, յորոց ոմանք բարեպաշտութեամբ, ոմանք եկեղեցաշինութեամբ, ի ոմանք ազգային բարերարութեամբ, այլք քաջարիութեամբ և այլք յայտ մեծ զործունէութեամբ հանդիսացեալք են մեծեռանգ շահատակութեամբ. ուստի և զսակաւս ոմանս զոնէ յայնց շիշատակեալ հարեալ ի խղճէ տազնապիցունքին միտք իմ դմատանս իմ յարձանացուցանել, որք են այսորիկ։
 1390. Տանտոյ զեապան Լեոնի։
 1561. Բաբայ Բուրթելիանց բաժ զօրապետ։
 1562. Արդար իշխան, զեապան Միրայէլ կաթողիկոսի ի Հոռմ առ պապն։
 Սուլթան, որդի Արդարու զեապանի։
 1611. Աւետիք Աթոն, Աստապատցի իշխան։
 1614. Թուհիջան, իշխան վանիցի, հանդերձ այլ խնդրամատոյց առ Սուլթան։
 1722. Յօհաննէս իշխան ժամակաղմ սիրեցեալ ի Շահթամաղայ։
 Աստուածատուր, իշխան Աստապատայ, ասպնջական Շահթամաղայ։
 Կարապետ Գրիգորեան խուրով, բարեպաշտ իշխան, հայր Սիմէօն կաթողիկոսի։
 1750. Թաւար, իշխան Ջահկիցի։
 1760. Եղիազար բարեպաշտ իշխան Ջուղայիցի, տեղափոխեալ ի Մոսկով բազար։
 1764. Մելքիսեդեկ Կարապետեան խուրով Խաղրակեանց, բարեպաշտ իշխան, եղբայր Սիմէօնի։
 Թորոս, իշխան Աշտարակիցի, Կամսարական։
 1765. Սարգիս Յօհաննեսեան, մեծահամբաւ իշխան Շամախիցի, տեղափոխեալ յԱստրախան։
 Մինաս Դիւլանեան, իշխան Շամախիցի, տեղափոխեալ յԱստրախան բազար։
 Մկրտում Գալստեան, իշխան Ջուղայիցի, տեղափոխեալ յԱստրախան բազար։
 Գուրգէն Ստաթէիլ Արէշով, բարեպաշտ իշխան Թիֆլիզիցի։

1780. Մինաս Եղիսպտրետն, բարեհամբաւ իշխան Ջուղայեցի, տեղափոխեալ
ի Մոսկով:
1785. Ստեփան Արմէլիքով, իշխան Թիֆլիզեցի:
1792. Սահակ Թորոսեանց, բարեպաշտ իշխան Աշտարակեցի:
Գէորգ Թորոսեան, բարեպաշտ իշխան Աշտարակեցի:
Յովսէփ Ղօրղտնետնց իշխան Թիֆլիզեցի:

Բ. ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

61 ա տմի

աշխարհի

- 3720 Նախ՝ սրբազանն Մօսէս, մեծն ի մտրդարէս, աստուածախօսն ի տեսա-
նօղս ե ճշմարտաստուութիւն ի մատենադիրս:
- 4017 Դեկտիւս Կրետտցի, հին պատմիչ յունաց:
- 4117 Դարէս Փոլիդիացի, հին պատմիչ յունաց:
- 4767 Հերոդոտոս Աղիկա[ր]նտցի, հայր պատմարանից:
- 4770 Թիւկիդէս Աթենացի, պատմարան յունաց:
- 4799 Կտեսիաս անւանի պատմարան և բժիշկ յոյն:
- 4814 Քսենոփոնա յոյն պատմարտն, որդի Գրիւդետյ:
- 4918 Արիստէաս սպասաւոր Պտղոմեայ ե պատմարան:
- 4923 Բիւռոս պատմիչ Բտղդէացւոց:
- 4948 Մանէթոս մեծտնուն այր պատմիչ Եղիպատցի:
- 5040 Պոդիւբիոս յոյն պատմարան, որդի Լիկորտայ:
- 5056 Մարիբտս Կտտինտյ ասորի, դեսպտն Վաղարշակայ:
- 5100 Ապոդոդորոս Աթինացի քաջ քերթող պատմարան:
- 5137 Կիկերոն Տուղղիոս իշխան պերճարանութեան:
- 5160 Վերդիլիոս անւանի պատմարան Լատինացւոց:

ամք

տեսոն

- 3 Դիոդորոս Սիկիլացի մեծահռչակ մատենադիր:
- 5 Սալլուստիոս Կայիոս Կրիսպոս պատմարան լատին:
- 8 Դիոնէսիոս Աղիլիկաոնացի յոյն մեծահամբաւ:
- 12 Տիտոս Լիւլիոս անւանի պատմարան լատին:
- 15 Վելլեյոս Պատերկուդոս պատմարան լատին:
- 18 Ստրաբոն դերազանց երկրաչտփ ե պատմարան յոյն:
- 30 Փլորոս անւանի պատմադիր լատին:
- 44 Փիլոն Երրայեցի հռչակաւոր մատենադիր:
- 67 Ղերուբնա դիւանադպիր, որդի Ափշտրյ:
- 71 Յովսեպոս Փլարիոս հրէայ պատմարան:
- 78 Պլինիոս Սեկունդոս հռոմայեցի իշխանաւոր:
- 94 Կուլինտիլիանոս մեծահռչակ ճարտասան:
- 103 Տակիտոս Կոռնէլիոս լատին տնվանի պատմիչ |
Կեփադիմոս յոյն մեծտնուն պատմարան:
Կեփադիոն պատմարան յոյն:
Կուլինտոս Կորուիոն լատին անւանի պատմիչ:
- 105 Պլուտարքոս յոյն անվանի փիլիսոփայ:
- 106 Ապպիանոս յոյն երեւելի պատմարան:
- 118 Շուետոնիոս Տրանտուլիդոս լատին պատմարտն:
- 120 Փղեպոն լատին երեւելի պատմիչ:
- 128 Արիստոն Փեղդացի ասորի քարտուղար:
- 140 Յուլիոս Կապիաուլինոս պատմիչ:
- 153 Յուստինոս լատին անւանի պատմիչ:
- 185 Աթէնէոս յոյն տնուանի քերթող և պատմիչ:
- 190 Պաւսանիաս յոյն մեծիմաստ պատմարան:
- 211 Բարդաժան Եգեսացի ասորի պատմիչ:

61 բ

- 216 Պերմելիանոս եպիսկոպոս Կեսարիոյ պաամիչ:
- 233 Դիոգն Կասսիոս իմաստասէր Բիւթանացի:
- 238 Կենսորինոս յոյժ հոշակաւոր ժամանակադիր:
- 284 Անոնիմոս անանուն լատին հնագոյն հեղինակ:
- 315 Տիդեմոն Տիոս պատմաբան:
- 319 *Զենոր Գլակ ասորի եպիսկոպոս, աշակերա Լուսաւորչին:
- 321 Եւսեբիոս Պամփիւղոս Կեսարացի մեծիմաստ:
- 324 *Աղաթանգեղոս, ատենագալիւր մեծին Տրդատայ:
- 330 *Մարութա սուրբ եպիսկոպոս պատմադիր հայոց:
- 369 *Բուղանդ Փոսաոս եպիսկոպոս Հոռոմ պատմիչ:
- 370 Որեղիոս Վիկտոր լատին երեւելի պատմաբան:
- 372 Եւորոպիոս հեղինակ լատին հոռոմայեցւոց պատմաբան:
- 383 Ամմիանոս Մարկեղինոս լատին Անաիոքացի:
- 385 Ոլոմպիոգորոս լատին պատմաբան:
- 416 Որոգիոս էրէց լատին երեւելի պատմաբան:
- 426 *Կորիւն հանճարեն սքանչելի, աշակերտ Սահակայ:
- 428 Սակրաա Սկոլաստիկոս յոյն անւանի:
- 438 Սողոմենոս Հերմիաս անուանի պատմիչ: ||
- 443 *Մուէս Ոորենացի սուրբ վարդապետ և քերթողահայր հայոց:
- 466 *Եղիշէ սուրբ վարդապետ հայոց, ատենագալիւր Վարդանայ:
- 468 Թէոգորիոս եպիսկոպոս Կիւրեայ պատմաբան:
- 470 Լերարատոս երեւելի, սարկաւագ Կարթագենեայ:
- 472 Յորն անաես Գոթացի երեւելի պաամիչ:
- 486 *Ղազար վարդապետ Փարսեցի, ճարտասան, աշակերտ Սահակայ:
- 500 *Թովմա վարդապետ Արծրունի, աշակերտ Եղիշէի:
- 525 Կասսիոյգորոս արքայ մաանագիր:
- 540 Զաքարիա ասորի, եպիսկոպոս Մելիտինւոյ, պատմաբան:
- 547 Պոկոպիոս հոետոր խորհրդական:
- 568 Աղաթիւս Սկոլաստիկոս իմաստասէր:
- 580 *Ուխտանէս Ուոհայեցի, եպիսկոպոս հայոց:
- 594 Եւագրիոս ասորի, երեւելի փաստաբան:
- 600 Մենանդր անուանի պատմաբան յունաց:
- 601 Թէոփիլակտոս Սիմակատտա Եղիպտացի:
- 602 Յօհաննէս եպիսկոպոս Մաղաղ հնախօս Անաիոքացի:
- 645 *Յօհաննէս եպիսկոպոս Մամիլիոնեան, պատմտրան հայոց:
- 641 *Մօսէս երկրորդ Սիւնեաց եպիսկոպոս, պատմաբան հայոց:
- 684 *Գրիգորիոս սուրբ եպիսկոպոս Արշարունեաց հայոց:
- 720 *Յովհան Օձնեցի իմաստասէր և սուրբ հայրապետ հայոց:
- 760 Գէորգ Սիւնկեղոս յոյն երեւելի պաամիչ:
- 810 Թէոփանէս վանահայր յոյն պատմաբան:
- 815 Նիկեփորոս սուրբ պաարիարդ Կոստանդնուպօլսի:
- 818 Դիոնէսիոս ասորի պատրիարգ յակօրիկեանց:
- 830 *Շապուհ Բագրատունի քաջ պատմաբան հայոց:
- 864 Անաստաս դրապետ լատին մատենագիր:
- *871 Համամ վարդապետ հայոց պատմաբան:
- 878 Փոտ Ֆօղիոս Բօթոսբաղարիոս յոյն:
- 880 Դաւիթ Նիկետ յոյն պաամիչ:
- 897 *Յօհաննէս կաթողիկոս հայոց, Դրասխանակերացի:
- 940 Սիմէօն Մետափրաստէս անուանի պաամիչ: |
- 926 Կոնստանդին կայսր Պերփոթէն Հայկաղն:
- 964 *Մեսրօր էրէց հայոց ի Վայոց ձորոյ պատմաբան:
- Յովսէփ Գնելիոս պատմաբան հունաց:
- Գէորգ Մոնախոս միայնակեաց յոյն պաամիչ:
- Լեոն գրամատիկոս յոյն պաամիչ:
- Սիմէօն Մաղիսարոս իշխանաւոր յոյն պաամիչ:

- 9/3 *Սուրբ Երիզոր Նարեկացի հրեշտակակրօն վարդապետ հայոց:
- 992 *Ստեփաննոս վարդապետ Տարոնեցի Ասողիկ պատմարան հայոց:
- 1041 *Գրիգոր Մաղիստրոս Պահլավունի հոետոր հայոց:
- 1053 *Արխատակէս վարդապետ Լաստիվերտցի պատմիչ հայոց:
- 1054 Գէորգ Կեղրենոս միայնակեաց յոյն պատմիչ:
- 1081 Յօհաննէս Սկիցիցէս Կիւրապաղատ յոյն պատմիչ:
Բրուեննիոս կրտսեր Նիկեփորոս Կեսարեցի:
Ալէքսիաս Գիրք Աննա Կոմնենա գշխոյի:
- 1115 *Սարկաւազ Յօհաննէս վարդապետ րանիրուն հոետոր հայոց:
- 1118 Յօհաննէս Զոնարոս յոյն հռչակաւոր պատմարան:
- 1118 Միքայէլ Գրիկաս Սիկիլացի յոյն պաաիչ:
- 1119 *Մատթէոս Վանէրէց Ուռհայեցի հայոց պատմիչ:
Կոնստանդին Մանասէ յոյն պատմիչ:
Յօհաննէս Սիննամոս ատենադպիր ի դրան կայսեր:
Նիկիտաս Հոնեատէս յոյն ի դրան կայսեր:
- 1136 Կաննէ Բարանգրէոս եպիսկոպոս ասորի:
- 1136 Կարապետ վարդապետ ղիտնական, պատմարան հայոց:
- 1145 *Գրիգոր Էրէց, պատմիչ հայոց:
- 1148 *Սամուէլ Էրէց Անեցի ժամանակադիր հայոց:
- 1164 Ներսէս Շնորհալի սրբազան հայրապետ և րարեկարգիչ հայոց:
- 1176 Միխայէլ պատմարան ասորի:
- 1186 Ներսէս Լամրոօնացի եպիսկոպոս Տարսնի վարդապետ հայոց:
- 1190 *Սամուէլ արեղայ Սկեռացի, պատմաբան հայոց:
- 1200 *Գրիգոր վարդապետ Սկեռացի, քաջ հոետոր հայոց:
- 1201 *Գէորգ վարդապետ Սկեռացի, պատմիչ հայոց: ||
- 1211 *Արխատակէս գրասէր քերթող հայոց:
- 1211 *Գէորգ վարդապետ Սսեցի, գրիչ հայոց:
- 1211 Վիլերրանդ կանոնիկոն Գրմեցի:
- 1212 *Միսիթար քահանայ Անեցի պատմարան հայոց:
- 1220 *Վանական Յօհաննէս վարդապետ, աշակերտ Միսիթարայ:
- 1241 *Մեծն Վարդան վարդապետ Խարձրբերդցի, աշակերտ Վանականի:
- 1242 *Կիրակոս վարդապետ Գանձակեցի, աշակերտ Վանական վարդապետի:
- 1253 Խարերբեյոս Գրիգոր Ապուլփարակ ասորի:
- 1263 *Մաղաքիաս արեղայ պատմիչ աշակերտ Վանականի:
- 1270 *Վահրամ վարդապետ Բաբուն անուանեալ հայոց պատմիչ:
- 1294 *Ստեփաննոս Ուոպելեանց եպիսկոպոս հայոց Սիւնեաց:
- 1298 *Զաքարիա Ծործորեցի եպիսկոպոս Արտազոու, հայոց պատմիչ:
- 1306 *Հեթում իշխան Կողիկոյ կրօնաւոր պատմարան:
- 1322 Յօհաննէս Վիլաննոս լատին պատմիչ:
- 1324 Նիկեփորոս Կալլիստոս պատմարան:
- 1326 Գէորգ Պախումբոս յոյն պատմիչ:
- 1335 *Սմբատ Կիւլիկեցի պատմարան հայոց:
- 1337 Ներսէս Պաղոն Պալինեց Գանոնիկոն քահանայ:
- 1343 Յօհաննէս Կանտակուղենոս կայսր պատմիչ:
Գէորգ Ակրօպօլիտ պատմարան:
- 1350 Նիկեփորոս Գրեղորաս յոյն պատմիչ:
- 1374 *Մարտիրոս վարդապետ, պատմադիր հայոց:
- 1392 *Գրիգոր Տաթևացի սուրբ վարդապետ, հոետոր հայոց:
- 1400 *Գրիգոր վարդապետ Խլաթեցի Ծերենց հայոց պատմիչ:
- 1401 *Առաքել եպիսկոպոս Սիւնեաց, պատմարան հայոց:
- 1402 *Յակոբ վարդապետ հայոց Ղրիմեցի, պատմիչ:
- 1400 *Միսիթար Ապարանցի ունիթոռ պատմարան:
- 1430 *Մկրտիչ Նաղաշ եպիսկոպոս Ամդայ:
- 1440 Դուկաս ազնուական յոյն պատմիչ:
- 1444 *Թօմաս վարդապետ Մեծորեցի աշակերտ Տաթևացուն:

- 63 p 1453 Լուսինիկոս Քաղկոնտի զառ յայն։
 1460 Գեորգ Փրոնչոս իշխանաւոր պատմարան։
 1553 Թաղէոս վարդապետ Սեբաստացի, հայոց պատմարան։
 1560 Դուհոս վարդապետ Կեղեցի մատենագիր հայոց։
 1580 Եղիշոս նորեկացի, ժամանակագիր հայոց։
 1597 Բարսեղոս Կեոտր կարգինալ լատին պատմիչ։
 1600 Գրիգոր Խրեդոյ, պատմարան հայոց։
 1622 Դեմետրոս վարդապետ Մոկացի Բեղլու, հայոց պատմիչ։
 1625 Կուսնեկոս Ալափխէ մեկնիչ։
 1630 Դիմիտրի վարդապետ Երևանցի, քերթող հայոց։
 1632 Դեմետրոս Դիմիտրի վարդապետ։
 1641 Կլեմէս Գալանոս լատին կրօնաւոր պատմիչ։
 1644 Կեան Ալաոս Ովդերիկոս պատմարան։
 1650 Յակոբ Ովսերիոս արքեպիսկոպոս լուսեբական։
 1662 Դեմետրի վարդապետ Դաւրիժեցի, միաբան էջմիածնի։
 1702 Յոսէփ Սիմոն Առնսթայն ասորի պատմիչ։
 1703 Մարէս Սողոմէն պատմագիր արարացւոց։
 1704 Ապուլֆաթ աշխարհագիր Արարացւոց։
 1711 Յոսաննէս Յովակիմ Ընթրոզի Մարտիրոսի։
 1733 Օդոստինոս Կալմէթ կրօնաւոր արքայ։
 1737 Դաւար Զահեցի կաթողիկոս հայոց։
 1777 Դիմիտրի Երևանցի կաթողիկոս հայոց աստուածարան։
 *Հին ասորեանք հայոց։
 *Յայտաւորք հայոց։
 1784 Դիմիտրի Զամչեան ախարմատ ժողովող և կամսոց պատմարան-
 Բայց յայտնակ զհանիւն եվ վիպարիւնք պատմարանից բազմաց եւ հա-
 եանա ալլոց բայց ժամանակի նոցա ոչ ուրեք յայտնին, որպէս եւ ասիւ
 *Խորոզ վարդապետ Մահառունի, մատենագիր հայոց։
 *Խորոզ պատմագիր հայոց։
 64 m *Ղեանգ պատմարան հայոց։
 *Թովմաս պատմարան հայոց։
 *Մովսէս Կաղանատուացի, պատմիչ աղուանից։
 *Ներսէս, պատմարան հայոց։
 *Ապուստոլ, պատմագիր հայոց։
 Ստեփաննոս Երեմիոս եպիսկոպոս ասորի ասորի։
 *Արքաշամ էրէց, պատմիչ հայոց։
 Բերառալարեն Տիոս Օդոստինեան։
 Կամարոս երեւիլի պատմարան։
 Արիւղենոս հնագոյն և հաւատարիմ մատենագիր։
 Դիմիտրի Բարսալիպ եպիսկոպոս ասորի։
 Վիլիմոս Տիւրացի պատմիչ։
 Պոպոս Վեհապիկեցի, երեւիլի պատմարան։
 Լեոնարդոս Սիդոնացի լատին եպիսկոպոս։
 Սեբաստոս Սուփոս անուանի պատմիչ։
 Յեսու Եղեացի հաշակաւոր պատմարան։
 Ամբոս պատմիչ արարացւոց։
 Գուստաւ Արեւիկոս հռոմայեցի։
 Վաղեսիոս Հեմրիկոս հաշակաւոր պատմարան։
 Յովել յայն անուանի մատենագիր։
 Բանդարսիոս մեծաշուկ պատմարան։
 Անանուս պատմիչ հայոց։
 Ասաննէս Վալանտ Գաղղիացի պատմարան։
 Միքայէլ Հերէն Գաղղիացի յատին մատենագիր։
 Սեբրիոս Սուլպիկէս պատմարան։

Հիւպոդիոտոս Իորտուեցի պատմիչ:
 Յօհաննէս Անտօն Վենետկցի պատմարան:
 Գղոտիոս Սալմաս մատենագիր:
 Եմուդիոս Պրորոս պատմարան:
 Փականդոս Հերմեն երեւի ժամանակագիր:
 Թովմաս Ըսթանլէս Անգլոցի պատմարան:
 Իսահակ Վոսիոս մատենագիր:
 Փիլոս Տորփիոս անուանի պատմիչ

64 ա

.
 65 ա Սոյնպէս եմ եւ յայլ բազում, որք զանցեալ դարս եւ զինացեալ ժամանակսն հեռագարձ գործեցելովմ ի նուին ներկայացուցեալ հանդէպ աչաց բանասիրաց ցուցանեն եւ ռուսացանեմ զինչո ինչ ի նոսր իղեալ անցեալին եմ. յորոց եւ իմ ուսեալ ռուսացանեմ զանտեղեակ ազգասէրս ի նոցանց լուեալ լսեցուցանեմ բարեխնդիր ունկնդրաց զանուանս և զաւարս յայնց անձանց, որոց յիշատակի ի տախտակ սրբից եւ զործի առաջի աչաց եւ զվոթիւնի ի բերանս բնակից բարբառեալ յարածամ արժան է:

65 բ

Գ. Խուրովը կանխում է Մանվել Վ. Կյումուշխանեցուն, XIX դ. առաջին կեսի հայ պատմարանին, որը հեղինակ է հետեյալ պատմագրական դործերի. ա. «Պատմութիւն անցից Սէվանա Վանուց» 1830 (տպ. Վաղ. 1871), բ. «Լուծ արժատոյն մերոյ» (Տիգ. 1832, Կ. Պ. 1841), և գ. Յիշատակարան, սկսեալ 1830 (տպ. Տիգ. 1917):

ԽՈՒՐՈՎԸ Ի ԲՐԵՎ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Գ. Խուրովի բանաստեղծութիւններն ամփոփված են նրա 2 դործում, որոնցից մեկն է արդեն մեղ ծանոթ «Երգարանն» է: Առաջինը դրի է առնված 1814 թ., երկրորդը 1825 թ., երկուսն էլ Ղլարում կեցած պահին, մինչ Աստրախան փոխադրվելը, որը տեղի ունեցավ 1827 թ.:

«Երգարանն»-ի միակ ձեռագիրը հասել է մեղ Հայաստանի Մատենադարանում № 487/499-ի ներքո:

Ձեռագիրն ունի ընդարձակ վերնագիր-տիտղոսաթերթ, որ կարգաչվում է այսպես.

«Երգարան Երգեցիկ մանկանց և յորդորակ սիրահար ղեռավարժից: Շարահիւսեալ ի ներդնեալ ոգի բաղմաշխատ Գէորգ Մելքիսեղէկեան Խուրով իշխանէ, յեղորորդույ տեառն Սիմէօնի մեծի ամենայն Հայոց Հայրապետին հանդուցելոյ. երկակի հայեցմամբ, այն է բոտ նկարագրին իբր ի սէր սիրելեաց և վասն ներքին դիտման առ սէր անուն սիրելին և միշտ ըղձալին համայն սիրելեաց:

«Ի հայրապետութեան տեառն Եփրեմայ կայսերապետակ սրբազնասուրբ կաթողիկոսի ամենայն Հայոց, հոգեծնի նոյնոյ տեառն Սիմէօնի հայրապետին...

«Ի զանազան ժամանակս և ի զանազան տեղիս վասն խնդրոյ այլոց կամ վասն յարմար դիպմանց և արժանաւորութեանց յորինեալք:

«Ամի տեառն 1825 և մարտի 6-ունն:

«(Գրեցի այս) ի Ղլար:

Տիտղոսաթերթի մյուս երեսից մեկ և կես էջ դալիս է առաջարանը՝ «Ձեռնուցումն ինչ» վերնագրով, ուր Գ. Խուրովը խոստովանում է, թէ ինչպիսի

հանգամանքներից զրգված նա ձեռնամուխ է եղել երգարան կազմելուն: Խոսում է յոթանասուն լեզուների մասին: Բսկ որպեսզի նրա երգերը դե-
ղարվեստական հաճույք պատճառեն, նա դիմել է բնությանր: Ապա՝ խոսե-
լով բուն երգերի մասին՝ նշում է, որ ինքը Տիրոջ ամենախոնարհ ծառա-
յից ծառան է: Բնի սմին նա ասում է. «Ամենաքաղցր բնութեան մարդա-
սիրին քաղցրացեալ զփառաբանութիւնս զանազան լեզուք պէսպէս բար-
բառովք և այլ և այլ եղանակօք ընկալնու» և այլն: Ստորագրությունն է՝
«Դէորդ Մելքիսեդէկեան Խուրով Խաղրակեանց»:

Զեռագիրը պարունակում է 37 թերթ և ընդգրկում է 44 երգ, որոնք
(անխտիր բոլորը) ակրոստիսներ են, բաղկացած յուրաքանչյուրը 3-ից
մինը 8 տուն, այսինքն.

ա.	3	տուն ունեցող	— «Ի Դէ» № 7, 12	ընդամենը	2
բ.)	4	»	— «Ի Դէգ» № 14	»	1
գ.)	5	»	— «Ի Դէո» № 1, 8, 10, 13, 15, 21, 27, 33, 34, 35, 36, 38, 40, 42	»	14
դ.	5	»	— «Ի Դէոր» № 6, 9, 22, 23, 25, 28, 29	»	7
ե.	6	»	— «Ի Դէորգ» № 14, 18	»	2
զ.	7	»	— «Ի Դէորգէ» № 2, 3, 11, 16, 19, 24, 26, 30, 31, 32, 37, 39, 41, 43, 44	»	16
է.	8	»	— «Ի Դէորգե է» № 5, 20	»	2
					44

Տողերի հանգերը միատեսակ են նույն տունում:

Բանաստեղծություններն այլևայլ բովանդակությամբ են. տաղեր, ներ-
բողներ, ողբերգություններ, երգեր, խաղեր և այլն, որոնց թվում մի քանիսը
հայրենասիրական ոգով զրվածներ, մի մասը՝ սեղանի երգեր:

«Երգարան»-ի բովանդակության մասին գաղափար կազմելու համար
տալիս ենք բանաստեղծությունների ցուցակը.

- ա. «Երգ ի Դէորգ Մելքիսեդէկեան Խուրովէ վասն մարդեղութեան
Աստուծոյ Բանին երգեալ», 4 տուն—36 տող (էջ 3 ա—բ):
- բ. «Երգ ի նոյնոյ Դէորգ Մելքիսեդէկեանէ առ ամենօրհնեալ Աստուա-
ծածին զրուատեալ», 7 տուն—28 տող (էջ 3 բ—4 ա):
- գ. «Ողբ ի նոյնոյ Դէորգ Խուրովէ, ի դիմաց ամենասուրբ Աստուա-
ծածին ի խաչելութիւն Քրիստոսի աղէգալար տոչորմամբ երգեալ»,
7 տուն—35 տող (էջ 4 ա—բ):
- դ. «Դարձեալ ողբ ի նոյնոյ Խուրովէ ի դիմաց ամենասուրբ Աստուա-
ծածին ի խաչելութիւն Քրիստոսի լալագին հեծեծանօք երգեալ», 5
տուն—20 տող (էջ 4 բ—5 բ):
- է. «Ի նույնոյ Խուրով իշխանէ առ Մկրտիչն Յօաննէս երգեալ», 8
տուն—32 տող (էջ 5 ա—բ):

Այս տաղի ամեն մի տան տողերը վերջանում են միևնույն
անուհով կամ բառով, որոնք են՝ Յօաննէս, Կարապետ, առաքեալ,
մարգարէ, Մկրտիչ, աւետիս, մարտիրոս, Դէորգ:

- զ. «Ի նույնոյ իշխանէ առ աստուածահայրն Դաւիթ զրուատեալ», 5
տուն—26 տող (էջ 6 ա):

- ե. «Ի նոյնոյ իշխանէ ի յարմատոյն Արրահամու. պարթևական հօրոստոյ», 3 տուն—12 տող (էջ 6 ր):
- ը. «Ի նոյնոյ առ սուրբ Սարգիս զօրավարն ներբողեալ», 4 տուն—11 տող (էջ 6 ր):
- թ. «Ի նոյնոյ Դէորդե առ յաղթող վկայն Քրիստոսի սուրբ Դէորդ քաջ զօրական», 5 տուն—25 տող (էջ 7 ա):
- ժ. «Նորին առ սուրբ Էջմիածնի մենացելոյն (մենացելոյն sic) ի միաբանից սղբալով երգեալ», 11 տուն—46 տող (էջ 7 ր):
- ժա. «Ի նոյնոյ իշխանէ վասն սրախողիտող առմանն Դանձակու», 7 տուն—30 տող (էջ 7 ր):

Դրված է 1804 թ. դեպքերի կապակցությամբ:

- ժբ. «Ի նոյնոյ Դէորդէ առ Ն. Գ. Մեծութեանն դրուատեալ», 3 տուն—18 տող (էջ 8 ա):

Ձոնված է Աղեքսանդր Վ կայսեր:

- ժգ. «Ի նոյնոյ Խուրովէ առ զերարժանս լոկեաղն խորհրդով և զանխուլ ժամանակի սգեալ», 4 տուն—16 տուն (էջ 9 ա):
- ժդ. «Ի նոյնոյ ի տօնի տեառն Եփրեմ սրբաղան վեհապետի ի մուտն հունվարի յաւուր շարաթի ի Մօզտօք քաղաքի երգեալ», 4 տուն—17 տող (էջ 9 ա):

Ձոնված է Եփրեմ ամենայն հայոց կաթողիկոսին 1810 թ. հունվարին Մողղոկ մտնելու առթիւ:

- ժե. «Ի նոյնոյ առ նոյն սրբաղնասուրբ վեհապետն Եփրեմ ներբողեալ», 4 տուն—16 տող (էջ 9 ր):
- ժզ. «Ի նոյնոյ իշխանէ առ Առաջնորդս և Արհիս աստուածարեալ», 7 տուն—21 տող (էջ 9 ր):
- ժն. «Ի նոյնոյ Խուրովէ վասն հանգիստավեհութեան քաջահաղթ մեծ զօրապետին Ալեքսեյ Պետրովիչ Երմոլովին ներբողեալ», 7 տուն—21 տող (էջ 10 ա):

Այս ներբողը հորինված պիտի լինի 1816—1825 թ. թ. միջոցին (1816 թ. Երմոլովի Վրաստանի կառավարչապետ նշանակվելու թիվն է, 1825 թ.՝ երգարանի ձևակերպումը):

- ժր. «Ըստ բարձու հրամանի տեառն Եփրեմայ սրբաղնասուրբ վեհապետին վասն սրախութեան Աղամեանց, ի սկզբանէ ցկատարած կենացն բացայայտեալ ի նոյնոյ Խուրովէ», 6 տուն—32 տող (էջ 10 ր—11 ա):
- ժք. «Ի նոյնոյ Դէորդէ ի զիմաց սուրբ Էջմիածնի մեծացելոյն յորդորանք առ Մինաս իշխան Եղիազարեան կամ մեծաղն», 7 տուն—20 տող (էջ 11 ա—բ):

Մինաս Եղիազարյան երեսնից զաղթած և Թիֆլիսում բնակության հաստատած՝ Գ. Խուրովի ժամանակակիցն էր:

- ի. «Ի նոյնոյ Խուրովէ առ նոյն Մինաս իշխան կամ առ այլ յատկացեալ», 8 տուն—24 տող (էջ 11 ր—12 ա):
- իա. «Ի նոյնոյ ի վերայ սեղանոյ ուրախութեան և բաղմաղաչից զոհութեան երգեալ», 4 տուն—19 տող (12 ա):
- իբ. «Ի նոյնոյ իշխանէ երգ ուրախութեան ի սէր զալստեան (գլուսեան. sic) հիւրոց», 5 տուն—23 տող (12 ր):

- իգ. «Ի նոյնոյ վասն յարգելի բաղմականաց սեղան Երզնայ», 5 տուն—21 տող (էջ 13 ա):
- իդ. «Ի նոյնոյ առ գերազանց յատկացեալ իշխանս», 7 տուն—20 տող (էջ 13 բ—14 ա):
- իե. «Ի նոյնոյ Խուրովէ առ գերազանցեալ իշխանս», 5 տուն—20 տող (էջ 14 ա):
- իզ. «Ի նոյնոյ Գևորգ իշխանէ վասն նորող ամուսնացելոց, վասն խնդրոյ ուրումն իշխանի հատկացեալ սիրելւոյ յօրինեալ», 7 տուն—33 տող (էջ 14 բ—15 ա):
- իւ. «Ողբ նորին Գևորգայ ի վրդովմանն Հայաստանի ողբալով ողբեալ», 4 տուն—24 տող (էջ 15 ա—բ):
- իօ. «Ողբ ի նոյնոյ յաղաչս բարձման յատկացեալ իշխանաց մերոց, բարձու հրամանաւ սրբազնասուրբ վհապետին յօրինեալ ի Ս. Պ. Բ.», 5 տուն—29 տող (էջ 15 բ—16 ա):
- իբ. «Ի նոյնոյ զբանք առ աւետարեր կռուել թռչունն ըստ խնդրոյ աստուածաբանի ուրումն ի Ս. Պ. Բուրգ», 5 տուն—30 տող (էջ 16 ա—բ):
1. «Ի նոյնոյ տաղ սիրոյ Երկակի յայեցմամբ առ սէր անուան, դարձեալ ըստ խնդրոյ նոյնոյ բարունուոյ ի Ս. Պ. Բ.», 7 տուն—31 տող (16 բ—17 ա):
- 1ա. «Ի նոյնոյ առ սիրելին և խորհրդաբար առ համայնից ցանկալին, դարձեալ ըստ խնդրոյ նոյնոյ աստուածաբանի», 7 տուն—28 տող (էջ 17 ա—բ):
- 1բ. «Ի նոյնոյ Խուրովէ առ Կատարինէ տիկինն և առ հարգելիս տիկնայս», 7 տուն—21 տող (էջ 18 ա):
- 1գ. «Ի նոյնոյ տաղ սիրոյ Երկակի նկատմամբ, ըստ խնդրոյ միայնացեալ քահանայի ուրումն», 4 տուն—20 տող (էջ 18 ա—բ):
- 1դ. «Նորին Գևորգեայ ի զիմաց հոգւոյն բարեսնաբար? (բրասնբր. SiC), առ մարմինն ստուգատունքս? (ստգտնքս SiC)», 4 տուն—16 տող (էջ 18 բ—19 բ):
- 1ե. «Ի նոյնոյ Խուրովէ ստուգատունք? (ստգտանք SiC), դարձեալ առ բազմամեղ անձն իւր», 4 տուն—20 տող (էջ 19 ա):
- 1զ. «Նոյնն ըստ լուսնեակ թռչնակն...», 4 տուն—15 տող (էջ 19 բ):
- 1է. «Ի նոյնոյ տաղ ուրախութեան դարձեալ առ լուսնեակն...», 7 տուն—28 տող (էջ 19 բ):
- 1ը. «Նոյնոյ սրտառուչ մաղթանք առ ԱԾ...», 4 տուն—16 տող (էջ 20 ա—բ):
- 1թ. «Նոյնոյ վասն սիրահար սիրելւոյ մանաւանդ առ գերազանց սիրելի», 7 տուն—15 տող (էջ 20 բ):
- 1ս. «Տաղ ի նոյնոյ ի յոյժ նեղիլն ի հոգւոյ պանդխտեաց, առ բարեկամս և սիրելիս իւր գանդատեալ», 4 տուն—20 տող (էջ 20 բ—21 ա):
- 1տ. «Ի նոյնոյ Գևորգ Խուրովէ առ ինքն զգալ... (?) ազդ ինչ (?)», 7 տուն—28 տող (էջ 21 ա—բ):
- 1ւբ. «Ի նոյնոյ ամենավշտալի Խուրովէ ստուգանք (?) առ մշտապատրիշ (?) կենցաղս կեղծաւորս», 4 տուն—16 տող (էջ 21 բ—22 ա):

խզ. «Նա ինքն խուրոֆը սոսկացեալ զգառն յիշատակ մահուանէն... բողոքէ», 7 տուն — 23 տող (էջ 22 ա — բ):

խռ. «Նոյնոյ Գէորգեայ խուրովի... ի սոսկալն ի յահէ դատաստանին», 7 տուն — 19 տող (էջ 22 բ):

Որոշ արժեք ունի ձեռագրի վերջում (էջ 36 բ — 37 ա) կցված ցանկը, ուր նշված է, թե որ երգը ի՞նչ եղանակով պիտի երգվի կամ նվագվի.

«Թէ ըստ թարց ուսման ըստ դիտման կամ ժամանակի երգողին երգել այլոց, բայց նշանակեմ զնոյնաձայնս ոմանս տեղեակք նոցին՝ այնքան գոնէ կարողացին երգել նոյնաձայն միասին (զորս պարտ է այսպէս).

«Առաջին որպէս Այսօր տօն է ծննդեան աւետիս տեառն մերոյ:

Թ. — Առաւօտեան քաղցր և անուշ հովերն (Ղափանցի Պետրոս վարժապետ):

Ծ. — Իււրիւնն նստել է՝ տրտում վոյ կանչելով (Ջաքարիայէ):

Ժա. — Նստէք ի մէջիս հարք և եղբարք (Յովնաթանէ):

Ժբ. — Լսել պարտ է քիմ գեօր...? (Շիրինի):

Ժգ. — Յարմար ձեով պաւական պաւական (Աւետիքի):

Ժե. — Սիրահար եղեր չար իշխան (Սերորէ վարժապետի):

Ժթ. — Եմ ունեցեալ տեսութեամբ (Նարեկացուն):

Իբ. — Յորժամ եղև գարուն՝ արև ծագեցավ (Յովհաննի):

Իգ. — Առե՛ք եղբարք ելցուք այսօր յայգեստան (յՕշականցի Դրիգոր):

Իե. — Ի չալըմ ի չալըմ սարդոն գէշալմ (Շահարասայ):

Իե. — Ով բորոտ և մարդասէր տէր իմ, աստուածպետական (Սիմէօն կաթողիկոսի):

Լ. — Բ բարձունս երկնից (Սերորէ վարժապետի):

Լգ. — Ի տարանջատ վայր ես, ահա սա ընծայեմ (Սիմէօն կաթողիկոսի):

Լգ. — Միրովամ ոահի, մի քեարի մահի (պարսից խաղ է):

Խբ. — Ի քոյ ձեռոցդ ես, ուր փախեցայց կամ յոր (Սիմէօն հայրապետի):

Խգ. — Իւն զղլար խսկի գէրայ վարարմ (օսմանցոց):

Խե. — Ձորեղ փչան յուժին հողմոյ (Դրիգոր (յՕշականցուն):

«Երգարան»-ի հիմնական նյութն ըստ բովանդակութեան կարելի է դասավորել այսպես.

ա. Տաղեր՝ կրօնական. «վասն մարդեղութեան բանին» (1), աստվածածնին (2, 3, 4), Հովհաննէս Մկրտչին (5), Դավիթ Մարգարեին (6), Դրիգոր Պարթևին (7), Ս. Սարգսին (8), Ս. Գևորգին (9), էջմիածնին (10):

բ. Տաղեր՝ սիրո (30, 31, 33, 39), սեղանի և ուրախութեան (21, 22, 23, 37), «ի նորոգ ամուսնացելոց» (26):

գ. Ներբողյաններ, Աղեքսանդր Լ կայսեր (12), Եփրեմ կաթողիկոսին (14, 15, 16, 18), զեն. Ա. Պ. Երմոյովին (17), Մինաս Եղիազարյանին (19, 20), «առ գերազանց հատկացյալ իշխանս» (24, 25), «առ կատարինէ տիկինն» (32):

դ. Բնութեանը նվիրված. կռուակին (29), լուսնյակ թռնակ (36, 37):

ե. Պատմական. Գանձակի առման առթիւ (11), «ողր ի վրդովմանն Հայաստանի» (27), «հաղադս բարձման հատկացեալ իշխանաց մերոց» (28):

ը. Մաղթանք (38).

և այլն:

Երգերը գրված են մասամբ այլևայլ անձանց պատվերով, օրինակ՝ Եփրեմ կաթողիկոսի (28), ոմն աստվածաբանի-բարունու (29, 30, 31), ոմն միայնացյալ քահանայի (33) և այլն:

* * *

«Գալազանադրքի» այլևայլ տեղերում Գ. խուրովը մտցրել է 30-ի չափ տաղեր նվիրված՝ հայոց նահապետներին, իշխաններին և թագավորներին, տաղերը մեկ, երկու կամ երեք տուն են պարունակում՝ յուրաքանչյուրը 4 տողից բաղկացած:

Արամին	2 տուն էջ	4 ա	Սմբատին	2 տուն էջ	38 ա
Պարոյրին	2 » »	5 բ	Աշոտին (շահնշահ)	1 » »	39 բ
Տիգրանին	2 » »	7 ա	Գեորգ (Մարգար)	1 » »	40 ա
Վաղարշակին	2 » »	11 բ	Աշոտ (Ողորմածին)	1 » »	41 ա
Արշակին	1 » »	12 ա	Չմշկիկին	1 » »	42 ա
Արտաշեսին	3 » »	13 ա	Դավիթին	1 » »	44 ա
Արգարին	3 » »	18 ա	Գրիգոր (Մաղխատ)	2 » »	45 բ
Տրդատին	2 » »	21 ա	Թորոսին	1 » »	48 ա — 1
Վարդգատին	1 » »	23 բ	Լևոնին	2 » »	49 բ
Վարդանին	3 » »	26 ա	Հեթումին	1 » »	50 բ
Վահանին	2 » »	29 բ	Լևոնին	1 » »	51 բ
Ներսեսին	1 » »	31 ա	Լևոնին	2 » »	53 ա
Մօրիկին	2 » »	31 բ	Դավիթ բեկին	1 » »	55 ա*
Մեխակին	1 » »	32 բ	Գեորգ խուրովին	1 » »	56 ա*
Վասիլին	2 » »	37 ա	(ինքը իրեն)		
Լևոնին	1 » »	37 բ			

Л. М. Меликсет-Бек

„Георг Мелкиседекян Хубов, армянский историк и поэт-патриот первой четверти XIX века“

Р е з ю м е

Цель данной работы — выяснить личность и отношение к литературе одного из предшественников Х. Абовяна на поприще армянской культуры — Георга Хубова, материалы о котором преимущественно сосредоточены в Гос. Центр. Историческом Архиве Груз. ССР.

Георг Мелкиседекян Хубов (1762—1829) — это одна из интересных фигур переходной эпохи, забытых или, вернее говоря, преданных забвению, в истории армянской культуры, вообще, и литературы, в частности, и которые, находясь под гнетом персидских ханов, ви-

дело единственное спасение Армении и армянского народа и покровительстве России и помощи великого русского народа.

Будучи выходцем из Еревана (род. в 1762 г.), Г. Хубов после присоединения Грузии к России эмигрировал в Грузию, в Тифлис, где он пробыл с 1803 по 1805 год, а затем переехал на Северный Кавказ и в Россию, где пробыл в городах — Моздоке, Москве, Петербурге, Кизляре и Астрахани. Повидимому, скончался в Астрахани около 1829 г. и там же похоронен.

Литературная деятельность Г. Хубова может быть прослежена по 2 жанрам: историография и лирика.

На поприще историографии Г. Хубов известен двумя произведениями, из коих одно — это „Описание достопримечательных происшествий в Армении“ за 1778—1809 г.г., опубликованное в русском переводе в Петербурге в 1811 г., другое же — это обнаруженная нами недавно в частной коллекции и приобретенная для Гос. Центр. Ист. Архива Груз. ССР обширная рукопись на армянском языке, содержащая в себе „Хронографическую историю“ Армении с древнейших (незапамятных) времен до 1814 г., где сообщаются весьма интересные сведения по истории Армении после потери ею государственной самостоятельности (1375 г.), с очерком истории армянских меликств и, в частности, эпопеи Давид-бека.

Как лирик Г. Хубов известен своим „Песенником“, составленным в Кизляре в 1825 г. и предназначенным для детей школьного возраста, а также патриотической лирикой, в частности элегиями об Армении и ее исторических деятелях, которые вкраплены как в „Песенник“, так и „Хронографическую историю“.

„Избранное“ из лирики Хубова, так же, как и замечательные по содержанию отрывки из его Истории, прилагаются к данной работе.